Azg
armenian daily

7 ՅՈՒՆԻՍ 2001 ՀԻՆԳՇԱԲԹԻ 104 (2308)

Ադրբեջանցիների կրակահերթից Բարեկամավանում բնակիչ է զոհվել

ՏԱՎՈՒՇ, 6 ՀՈՒՆԻՍ, ՆՈՅՅԱՆ ՏՊԱՆ- Հունիսի 5-ին, ժամը 18:30-ի սահմաններում, խոտհնձի դադարի ժամանակ, հանգստանալու դադարի ադրբեջանցիների ավտոմատային կրակահերթից զոհվել է Տավուշի մարզի Բարեկամավան գյուղի 49 ամյա բնակիչ Մարտիկ Մուրեյանը: Բարեկամավանի գյուղապետ Հովիկ Ղարաբեքյանի վկայությամբ, ադրբեջանցի 3 զինյալներ մոտ 1,5 կմ խորացել են հայկական տարածք: Մուրեյանն էլ երկու անչափահաս որդիների հետ խոտ էր հնձում իր հողամասում, որը հայկական դահակակետերից առաջ է 150 մ եւ գտնվում է չվերահսկվող գոտում. գյուղացուն սիրել է դիսկի դիմել ծանր սոցիալական վիճակը: Գյուղապետի խոսքերով, ադրբեջանցիները շուրջ 20 րոպե կրակ են տեղացել, որին մոտակա հայկական երկու դահակակետերից միայն մեկն է դատասխանել, այն էլ երկու կրակոցով: Մուրեյանի դիակը միայն 2,5 ժամ անց է դուրս բերվել այդ գոտուց:

ԲՐՅՈՒՍԵԼ

Եվրամիության հետ գործակցությունը՝ արտակարգ կարեւոր առաջնահերթություն ՀՀ-ի համար

Այսպես արտահայտվեց նախագահ Քոչարյանը ԵԱՏՕ-ի կենտրոնակայանում

ԳԱՅԱՆԵ ՄՈՒՔՈՅԱՆ
Բրյուսել

ՀՀ նախագահ Ռոբերտ Քոչարյանի դատասնական այցի առաջին օրը ծանրաբեռնված էր. ՀՀ դատասնական դատվիրակությունը՝ նախագահի գլխավորությամբ, երեկ հանդիպումներ ունեցավ Եվրոդական խորհրդարանի փոխնախագահի ու մի շարք դատգամավորների հետ, այդ թվում նրանց, ովքեր համագործակցում են ԵԽ միջխորհրդարանական հանձնաժողովում, եւ ապա երեկոյան հանդիպեց Եվրոդական հանձնաժողովի նախագահ Ռոմանո Պրոդիի հետ: Ուշ երեկոյան օրը եզրափակվեց ՀՀ նախագահի անունից տրված ճաշկերույթով:

Միջանկյալ Ռ. Քոչարյանը (ինչպես բոլոր այցերի ժամանակ է եղել) այցելեց Բրյուսելում տեղակայված ՆԱՏՕ-ի կենտրոնական: Մոտ կես ժամ (մոտ 10-15 րոպե էլ նախատեսվածից ավելի) առանձնազրույց ունեցավ ՆԱՏՕ-ի գլխավոր քարտուղար լորդ Ջ. Ռոբերտսոնի հետ, որը, ի դեպ, Բրյուսել այցելած ՀՀ նախագահին դիմավորեց ՆԱՏՕ-ի կենտրոնակայանի հենց դռների առջեւ: Հանդիպումից հետո լորդ Ռոբերտսոնը կարճ ճեպազրույցում կարեւորեց Հայաստանի դերը «Գործընկերություն հանուն խաղաղության» ծրագրում իբրեւ ակտիվ անդամի: Ընդ որում, ծրագիրը պիտի շարունակվի ու զարգանա: Պատասխանելով այն հարցին, թե չի՞ դատրաստվում ՆԱՏՕ-ն տեղեկատվական կենտրոն բացել Հարավային Կովկասում, նշեց, որ առայժմ նման անհրաժեշտություն չի տեսնում:

Տես էջ 8

ԹՈՒՐՔԻԱ

Ադրբեջանը դատրաստ է ճանաչելու Կիպրոսի զավթված հատվածը

Ըստ թուրքական «Սաբահ» թերթի հունիսի 4-ի համարում հրապարակված տեղեկության, Ադրբեջանը մոտ ապագայում ճանաչելու է այսպես կոչված «Հյուսիսային Կիպրոսի թուրքական հանրապետությունը», որը հաստատվել է Կիպրոսի վրա 1974 թ. թուրքական զինվորական արշավանքից հետո: 27 տարի հետո, առ այսօր, այդ ինքնակոչ պետությանը ոչ մի երկիր չի ճանաչել, բացի Թուրքիայից:

«Սաբահը» տեղեկացնում է, որ ճանաչման հարցը ներկայումս քննարկվում է Անկարայում, եւ ինքնակոչ հանրապետության «պատասխաններն» արդեն տեղյակ են պահել Անկարային Ադրբեջանի այդ մտադրության մասին: Թուրք կիպրոսցիների ղեկավար Ռաուֆ Դենքթաշն արդեն Անկարայում է, որպեսզի, ըստ թուրքական թերթի, տեղեկացնի ճանաչման հարցի մասին եւ քննարկի Կիպրոսի օրինական կառավարության՝ Եվրամիությանն անդամ դառնալու գործընթացը:

«Սաբահի» համաձայն, ինքնակոչ հանրապետության «վարչապետ» Դերվիշ Էրոլլուն վերջերս կողմ գրավյալ տարածք այցելած Ադրբեջանի նախագահի նախկին խորհրդական Վաֆա Գուլուզադեին հայտնել է, որ թուրք կիպրոսցիները «թուրքական հանրապետությունների» հետ բանակցում են կողմ իրենց մասի ճանաչման հարցի շուրջ: Նշելով, որ թուրք կիպրոսցիները «բազմաթիվ ակնկալություններ ունեն Ադրբեջանից», Էրոլլուն ասել է. «Մեր ցանկությունն է, որ Ադրբեջանը լուծի Ղարաբաղի խնդիրը եւ Կիպրոսի տարածայնությունները մեր ուզած ձեւով»:

Գուլուզադեն պատասխանել է, թե Ադրբեջանի եւ Կիպրոսի թուրքերը նույն խնդիրներն ունեն, որի պատճառը հայերի «ներխուժումն է եւ հույների էնոսիսը» (միացումը Հունաստանին):

ՋՈՐՋ ՏԵՐ-ԲԱԲԹՈՂ
Նիկոսիա

Մեղրու տարածաշրջանի ղեկավարությունը դեմ է Ադրբեջան-Նախիջեւան միջանցքի բացմանը

Սյունիքի մարզի Մեղրու տարածաշրջանի խաղաղների եւ գյուղական համայնքների ղեկավարությունը տարածել է բողոքի հայտարարություն՝ կտրականապես դեմ արտահայտվելով Մեղրու շրջանով Ադրբեջան-Նախիջեւան միջանցքի բացմանը եւ այնտեղ միջազգային խաղաղարար ուժերի տեղաբաշխմանը: Այդպիսի միջանցքի բացումը, ինչպես պնդում են հայտարարության հեղինակները, դիտարկվում է ղարաբաղյան բանակցությունների գործընթացում՝ որպես Լաչինի միջանցքը Հայաստանին եւ ԼՂՀ-ին կապող միջանցքի ենթատեքստում:

Հայտարարության մեջ, ինչպես հաղորդում է CNA գործակալությունը, նշվում է, որ Մեղրիով միջանցքի բացումը ոչ միայն չի օգնի ղարաբաղյան հակամարտության կարգավորմանը, այլեւ ուղղակիորեն կսպառնա Հայաստանի ազգային անվտանգությանը եւ ինքնիշխանությանը: Բացառելով նման միջանցքի հնարավորությունը, հայտարարության հեղինակները միեւնույն ժամանակ անհրաժեշտ են համարում հաղորդակցությունների վերագործարկումը դրանց բնականոն աշխատանքի համար սանձնելով պատասխանատվություն:

Հայտարարությունը ստորագրել են Մեղրու եւ Ագարակի խաղաքաղաքները, շրջանի բոլոր գյուղերի ավագանիները, տեղական ինքնակառավարման շրջանային մարմինները, ինչպես նաեւ ՀԺԿ, ՀՀԿ եւ ՀԿԿ շրջանային բաժանմունքները:

Ախալքալաքի շուրջ Շեւարդնաձեի եւ Քոչարյանի միջեւ ոչ մի պայմանավորվածություն

Մեր թերթի նախանցյալ համարում, տեղեկությունը հաղորդելով Փարիզում լույս տեսնող «Nouvelles d'Arménie» հանդեսից, խիստ վերապահությամբ տեղեկացրել էինք, որ վերջերս Մինսկում կայացած ԱՊՀ ղեկավարների հանդիպման շրջանակներում Վրաստանի եւ Հայաստանի նախագահների հանդիպման ժամանակ էդուարդ Շեւարդնաձեն տեղեկացրել է Ախալքալաքում ռուսական ռազմակայանում Ռուսաստանի զորքը հայկականով փոխարինելու իր մտադրության, ինչպես նաեւ Վրաստանի ֆեդերատիվ հանրապետության վերածվելու դեպքում Ախալքալաքին ֆեդերատիվ առանձին սուբյեկտի կարգավիճակ տալու մասին:

ՀՀ նախագահ Ռ. Քոչարյանի Բրյուսել ուղեւորության ընթացքում նախագահի մամլո խոսնակ Վահե Գաբրիելյանն ի պատասխան «Ազգի» թղթակցի այս մասին արած հարցադրման, պատասխանել է, որ տվյալ տեղեկատվությունն ամենեւին չի համապատասխանում իրականությանը:

ՖՈՒՏԲՈԼ

Տրցավարի օգնությամբ լեհերը 1 միավոր տարան Հայաստանից

Երեկ երեկոյան Վ. Սարգսյանի անվան հանրապետական մարզադաշտում տեղի ունեցավ աշխարհի առաջնության նախընտրական այնքան սպասված խաղը Հայաստանի եւ Լեհաստանի ֆուտբոլի ազգային հավաքականների միջեւ: Թեեւ լեհ ֆուտբոլիստներին հաջողվեց խաղի 4-րդ րոպեին գրավել Աբրահամյանի պատասխանած դարպասը (գոլի հեղինակ՝ Ռադոսլավ Կալուժնի), սակայն հայ ֆուտբոլիստներն անընկճելի կամք եւ հաղթանակի հասնելու եռանդ ցուցաբերեցին: 13-րդ րոպեին Հայաստանի հավաքականն իր ոմբակոծությունը Արթուր Պետրոսյանի միջոցով ոչ միայն հավասարեցրեց հաշիվը, այլեւ խաղային զգալի առավելություն ձեռք բերեց 5-րդ ենթախմբի առաջատար Լեհաստանի թիմի նկատմամբ: Անշուշտ, մրցամարտի պատկերը հոգուս հայկական հավաքականի այլ պատկեր կունենար, եթե գլխավոր մրցավարը դաշտից հաջորդաբար չհեռացներ Ալբերտ Սարգսյանին, Ֆելիքս Խոջոյանին եւ Հայկ Գեւորգյանին եւ դեռեւս քարտ ցույց չտար մեր ֆուտբոլիստներից երեքին: Ճիշտ է, կարմիր քարտ ստացավ նաեւ լեհ ֆուտբոլիստներից Յացեկ Բոլիը, սակայն մինչ այդ մրցավարին «հաջողվել էր» փչացնել գեղեցիկ խաղը եւ ջղային մթնոլորտ ստեղծել խաղադաշտում:

Այսուհանդերձ, 10-ի դիմաց 8 հոգի մնացած հայկական թիմի համար 1-1 արդյունքը նույնպես պերճախոս է:

Իգոր Իվանովը նախապատրաստելու է Պուտինի այցը Թուրքիա

ՄՈՍԿՎԱ, 6 ՀՈՒՆԻՍ, ԱՐՄԵՆՊՐԵՍ- Թուրքիայում Իգոր Իվանովի բանակցությունները նվիրված կլինեն այդ երկիր Վլադիմիր Պուտինի այցի նախապատրաստմանը: Ռուսաստանի արտգործնախարարը հունիսի 7-ին պատասխանական այցով Անկարա կժամանի Համբուրգից, որտեղ նա կմասնակցի Բալթիկ ծովի պետությունների խորհրդի արտգործնախարարների խորհրդակցությանը:

Մոսկվայի իրազեկ աղբյուրներից ԻՏԱՌ-ՏԱՍՍ-ի թղթակցին հայտնի է դարձել, որ Իգոր Իվանովը հանդիպում կունենա Թուրքիայի նախագահ Ահմեդ Նեջդեթ Սեզերի հետ, բանակցություններ կանցկացնի վարչապետ Բյուլենթ Էջեւիթի եւ իր թուրք գործընկեր Իսմայիլ Ջեմի հետ: Այդ հանդիպումների ընթացքում ծրագրվում է քննարկել երկկողմ կապերին առնչվող հարցեր, ինչպես նաեւ մի շարք միջազգային եւ տարածաշրջանային խնդիրներ: Ռազմատեխնիկական համագործակցության բնագավառի կոնկրետ նախագծեր, հայտնել են աղբյուրները, չեն քննարկվելու:

Ռուսաստանը Գերմանիայից հետո Թուրքիայի առեւտրական երկրորդ գործընկերն է: Երկու երկրների միջեւ առեւտրատնտեսական կապերի ծավալը, հաշվի առնելով «մաֆոյին» առեւտուրը, անցյալ տարի մոտեցել է 10 մլրդ ԱՄՆ-ի դոլարի: Մոտավորապես 1 մլն ռուսաստանցիներ ամեն տարի որպես զբոսաշրջիկներ այցելում են Թուրքիա:

ՆԱՄԱԿ-ՄՏԱՀՈԳՈՒԹՅՈՒՆ

«Ջավախքի հայության արձագանքն «Ազգի» հոդվածին

Ս. թ. մայիսի 17-ի համարում «Ազգն» անդրադարձել է Ջավախքի հայության խնդիրներին՝ տպագրելով «Ամիսներ շարունակ առանց էլեկտրաէներգիայի» հոդվածը: Մեկ հոդվածով, բնականաբար, չես փոխի այն տխուր իրողությունը, որում հայտնվել եւ գոյատեւում է վիրահայությունը: Հոդվածի տպագրումն ավելի իրատեսական նպատակ էր հետապնդում՝ հուսադրել Ջավախքի հայ բնակչությանը, թե իրենց հոգսերն անտեսված չեն Հայաստանում (գոնե մամուլի կողմից): Իրենք՝ Ջավախքի հայ բնակիչները, միամիտ հույսեր էին տածում, թե այդօրինակ հոդվածներն ինչ-որ «լծակ» կհանդիսանան իրենց ձեռքում՝ տեղի միջին ու մանր պաշտոնյաների վրա ազդելու (սովորաբար կարեւոր շատ հարցերի լուծումը հենց դրանցից է կախված լինում), անօրինականությունները գոնե մասամբ սանձահարելու: Ավաղ, սրանք առայժմ սոսկ հույսեր են... Այդուհանդերձ, տպագրում ենք Ջավախքի հայության անունից «Ազգին» հղված այս նամակը, որ, երախտագիտության խոսքերից բացի, նաեւ հարցեր է պարունակում: Հարցեր, որոնք ուղղված են ոչ մեզ: Իսկ թե այդ հարցերի հասցեատեր Ջավախքի շրջանի պաշտոնյաները հարկ կհամարե՞ն տեղի բնակչության առջեւ հաշվետու լինել դրանց վերաբերյալ, թողնում ենք իրենց խղճին: Ի վերջո, հարցերը «մոռացության մատնվելով» չեն լուծվում, եւ Ջավախքի հայության՝ էլեկտրաէներգիայից զուրկ լինելու հարցին էլ դեռ բազմաթիվ անդրադարձեր կլինեն...

Ա. Դ.

«Ազգ» օրաթերթին

Ջավախքի հայ բնակչությունը մեծ հուզմունքով ու ջերմությամբ ընդունեց մայիսի 17-ի հոդվածը («Ամիսներ շարունակ առանց էլեկտրաէներգիայի»), ուր արծարծում էր մեզ հուզող ամենաառաջնային խնդիրներից մեկը: Այդ հրապարակումը մի թարմ շունչ էր մեզ՝ խավարում (բառիս ուղղակի իմաստով) եւ անհուսության մեջ գտնվողներիս համար, սկսեցինք ինչ-որ հույսեր փայփայել, թե մեր վիճակը կբարելավվի:

Այս նամակով ուզում ենք շնորհակալություն հայտնել այն անձնուրությունը, որ, իր չիմացության պատճառով, ակամա թույլ էր տվել Ախալքալաքի բնակիչ Սերգեյ Պողոսյանը (նրա խոսքը պարբերաբար մեջբերվում է հոդվածում): Ջավախքի հայերիս, ընդամենը մի քանի օր տրված էլեկտրաէներգիայի դիմաց, հավաքել են ոչ միայն հոդվածում նշված 10-ական լարին, այլեւ՝ հաջորդաբար 8 եւ 3-ական լարի եւս: Մենք այդպես էլ չկարողացանք պարզել, թե ի՞նչ հիմնավորմամբ ու նպատակով են հավաքում այդ գումարները (ավելի ճիշտ կլիներ ասել՝ շորթում): Սակայն կցանկանայինք այդ մարդկանց ձեր թերթի միջոցով ուղղել մեզ հուզող հարցեր:

Նախ եւ առաջ՝ 2000 թ. դեկտեմբերի 30-ից մինչեւ 2001-ի հունվարի 7-ը մեզ տրված էլեկտրաէներգիան վճարովի՞ հիմունքներով էր, թե՞ անվճար: Այնուհետեւ, վերը նշված ժամանակահատվածում մեր տարածաշրջանում սպառված էլեկտրաէներգիայի ընդհանուր քանակի ո՞ր մասն է բաժին ընկնում Ախալքալաքի շրջանին, որքա՞նը՝ Ախալցխայի, Ասպինձայի եւ Ադիգենի շրջաններին առանձին-առանձին: Արդյոք Ախալքալաքի շրջանը մինչեւ այսօր ընդհանուր առմամբ որքա՞ն էլեկտրաէներգիա է սպառել, որքա՞ն արժե այդ սպառած էլեկտրաէներգիան, եւ այդ արժեքի ո՞ր մասն է մուծվել: Շարունակենք հարցադրումները: Ի վերջո, ո՞ւմ մեղքով եւ ի՞նչ պատճառով է, որ Ախալքալաքի շրջան էլեկտրաէներգիա մուտք չի գործել եւ չի գործում: Եվ վերջին հարցը. ինչո՞ւ մինչեւ այժմ ոչ ոք հետաքրքիր չի եղել բացահայտելու, թե ինչպիսի՞ դեր ունեն տեղական ՀԷԿ-երն էլեկտրաէներգիայի մատակարարման այս խափանումների շղթայում, քանի որ անժխտելի է այդ խանգարիչ դերի առկայությունը:

Հուսանք, որ մեր հարցերն անպատասխան չեն թողնվի, եւ մեր լավատեսությունն առաջիկայում էլեկտրաէներգիայով ապահովվելու վերաբերյալ, անհիմն չէ:

ՈԵՅՏԻՆԳ

Փորձագետների անունները՝ ընթերցողների դատաստանով

Հունիսի 5-ի «Ազգում» հրապարակված փորձագիտական հարցման արդյունքները («Հայաստանի ամենաազդեցիկ 20 գործիչները»), ինչպես պարզվում է հեռախոսազանգերից, որոշակի հետաքրքրություն են առաջացրել: Զանգահարողներից շատերը, սոսկ ընթերցողական հետաքրքրասիրությունից դրդված, խնդրում էին հրապարակել նաեւ ազդեցիկ գործիչներին որոշող փորձագետների անունները: Ոմանք էլ, հավանաբար ցուցակում տեղ չգտած գործիչներ կամ նրանց բարեկամներ, հեգնանքով հարցնում էին, թե ովքեր են այդ փորձագետները կամ գոյություն ունե՞ն նրանք... Ահա, ավելի առաջիններին ընդառաջելով, ներկայացնում ենք փորձագետների ցուցակը:

Ադիբեկյան Սիարոն - «Սոցիոմետր» կենտրոն
Այդինյան Վալերի - «Նովոյե վրեմյա» օրաթերթ
Բաղալյան Հակոբ - «ԱՐ» հեռուստաընկերություն
Բաղդասարյան Լեւոն - Հասարակական տեխնոլոգիաների կենտրոն
Բարսեղյան Զոյա - Արմենպրես լրատվական գործակալություն
Բլեյան Լիլիթ - ԱԻ+ հեռուստաընկերություն
Դեմուրյան Ավետ - ՌԻԱ «Նովոստի» լրատվական գործակալություն
Ենոքյան Աղասի - «Կենտրոնական Ասիա եւ Կովկաս» ամսագիր
Թադեւոսյան Աղասի - Ազգային եւ ռազմավարական հետազոտությունների կենտրոն
Թադեւոսյան Արա - «Մեդիամաքս» լրատվական գործակալություն
Թոփչյան Կարեն - BBC ռադիոկայան
Կյուրեղյան Էդուարդ - «Ամերիկայի ձայն» ռադիոկայան
Հովհաննիսյան Նաիրա - «Առավոտ» օրաթերթ
Հովհաննիսյան Ռաֆիկ - «Արմենիա» հեռուստաընկերություն
Մարգարյան Հայրապետ - Իրանագիտության կովկասյան կենտրոն
Մովսիսյան Գայանե - «Սնարք» լրատվական գործակալություն
Մուքոյան Գայանե - «Ազգ» օրաթերթ
Նահապետյան Գագիկ - «Հայաստանի Հանրապետություն» օրաթերթ
Նաղդալյան Տիգրան - Հանրային հեռուստատեսություն
Պետրոսյան Դավիթ - «Նոյյան տապան» գործակալություն
Պողոսյան Գեւորգ - Հայկական սոցիոլոգիական ասոցիացիա
Սարգսյան Վայլե - «Ազատություն» ռադիոկայան
Սաֆարյան Արամ - «Պրոմեթեւս» հեռուստաընկերություն
Մեյրանյան Սպարտակ - «Հայոց աշխարհ» օրաթերթ

Հայաստանում վաճառվում են հավի ժամկետանց ձվեր

ԵՐԵՎԱՆ, 6 ՀՈՒՆԻՍ, ՆՈՅՅԱՆ ՏԱՊԱՆ: Հայաստանի շուկայում վերջին շաբաթներին իրացվում են հավի ժամկետանց, նույնիսկ հոտած ձվեր: Այս մասին ահազանգեցին գնորդները: Նրանց վկայությամբ, ըստ վաճառասեղանների ցուցանակների, այդ ձվերն իրանական են, եւ վաճառողները հետեւողականորեն հիշեցնում են, որ դրանք «պետք է օգտագործել միայն խմորեղենի համար»: Եթե գնորդը ետ է վերադարձնում այդ ձվերը, ապա վաճառողները դրանք պատրաստակամորեն փոխարինում են տեղական ձվերով:

Ըստ պաշտոնական վիճակագրության, մայիսին Իրանից հավի ձու չի ներկրվել, իսկ մարտին եւ ապրիլին ներկրվել է ընդհանուր առմամբ 23 մլն 523 հազար հատ ձու:

Հայթեստանդարտի վերահսկողության ծառայությանը մեր ահազանգից 24 ժամ անց մեր նշած առեւտրի կետում չհաջողվեց հայտնաբերել այդ սքեմը: Վերահսկողության ծառայության պետի տեղակալ Գեւորգ Գյոզալյանը հայտարարեց, որ «Սուրճերի մասին» նոր օրենքով սահմանափակվել են սուրճերը կատարելու իրենց հնարավորությունները, եւ առաջին հերթին սպառողն ինքը պետք է պաշտպանի իրեն: Նա միայն հիշեցրեց, որ թռչնի ձվի վրա մակնշվում է ինչպես ծագումը, այնպես էլ օգտագործման ժամկետները, որոնք էլ պետք է կողմնորոշեն գնորդին:

Սողքը վնասել է Գորիս-Տաթեւ ճանապարհը

ԳՈՐԻՍ, 6 ՀՈՒՆԻՍ, ԱՐՄԵՆՊՐԵՍ: Այսնհիի մարզում տեղացած հորդառատ անձրեւները զգալի վնաս են պատճառել ճանապարհային ցանցին: Հատկապես Գորիս-Տաթեւ մայրուղում տեղի է ունեցել 80 մ երկարությամբ, 18 մ խորությամբ եւ 5 մ լայնությամբ սողք: Ճանապարհի այս հատվածում երթեւեկությունը իրականացվում է միակողմանի, եւ ապահովված չէ անվտանգությունը, քանի որ դեռեւս առկա է սողքի ասֆալտանման զարգացման վտանգը:

Մարզպետարանի ճանապարհաշինության եւ տրանսպորտի բաժնի վկայությամբ, սողքի հետեւանքները վերացնելու համար անհրաժեշտ է 5-6 մլն դրամ: Ի դեպ, այս ճանապարհը, որը տանում է Տաթեւի վանական համալիր, վերանորոգվում է Հայաստանում քրիստոնեությունը պետական կրոն հռչակելու 1700-ամյակի կապակցությամբ նախատեսված միջոցառումների շրջանակներում պետբյուջեի ֆինանսավորմամբ: Ճանապարհաշինական աշխատանքներն ընթացքի մեջ են: Ավարտվել են դեռեւս հողային աշխատանքները:

«ԱԶԳ» ՕՐԱԹԵՐԹ
Հրատարակության ԺԱ տարի
Հիմնադիր եւ հրատարակիչ
«ԱԶԳ ՕՐԱԹԵՐԹ» ՍՊԸ
Երեւան 375010, Հանրապետության 47
Ֆաքս՝ 374-1-562863
e-mail: azg2@arminco.com
www.azg.am
Գլխավոր խմբագիր
ՅԱԿՈԲ ԱՒԵՏԻՔԵԱՆ / հեռ. 521635
Խմբագիր
ՊԱՐՈՅԻ ՅԱԿՈԲԵԱՆ / հեռ. 529221
Տնօրէն
ՅԱՐՈՒԹԻՒՆ ԱՌԱՔԵԼԵԱՆ / հեռ. 529353
Համակարգ. ծառայութիւն
/ հեռ. 582483
Շուրջօրյա լրահավաք ծառայութիւն
/ հեռ. 529353
Apple Macintosh
հանդակարգչային շարուածքը
«Ազգ» թերթի
Թերթի նիւթերի ամբողջական թէ մասնակի արտատպումները տպագիր մամուլի միջոցով կամ ռադիոհեռուստատեսութեամբ, առանց խմբագրութեան գրաւոր համաձայնութեան, խստիւ արգելւում են; համաձայն ՀՀ հեղինակային իրաւունքի մասին օրէնքի:
Նիւթերը չեն գրախօսւում ու չեն վերադարձւում
«AZG» DAILY NEWSPAPER
Editor-in-chief
H. AVEDIKIAN / phone: 521635
47 Hanrapetoutian st.,
Yerevan, Armenia, 375010

ՀԱՄԱՌՕՏ

Ն. Հունանյանի ցուցմունքների ընթերցումը կավարտվի ուրբաթ օրը

«Հոկտեմբերի 27-ի» քրեական գործով դատական նիստերի քարտուղարը հունիսի 6-ին շարունակում էր ամբաստանյալ Նաիրի Հունանյանի դատաքննական ցուցմունքների ընթերցումը՝ ընհուպ մոտենալով ավարտին: Դատական հաջորդ նիստում, որը տեղի կունենա ուրբաթ օրը, կավարտվի ցուցմունքների ընթերցումը եւ դատավարության մասնակից կողմերն իրենց հարցերը կուղղեն ամբաստանյալ Ն. Հունանյանին: Վերջինիս հարցեր տալու առաջնությունը պատկանում է իր դատապաշտպանին, այնուհետեւ՝ ամբաստանյալներին: Թե որքանով են նրանք յուրացրել ընթերցված նյութը՝ պարզ կդառնա նրանց հարցերից:

Հրդեհ Նորքի հեռուստաշտարակի հարեւանությամբ

Նորքի հեռուստաշտարակի հանդիպակաց բլուրին բռնկված հրդեհը, որ ժամեր շարունակ մեղմանալով եւ ուժգնանալով չէր հանդարտվում, երեկ, ժ. 17-ի սահմաններում վերջապես հանգցվել է: Այս մասին տեղեկացանք Հանրային հեռուստատեսության աշխատակիցներից: Հրդեհի բռնկման պատճառը դեռեւս պարզված չէ. բռնկումից սկսել են այրվել բլրին թափված մեծաքանակ աղբն ու ծղոտը:

Ա. Դ.

ԱՆԱՍՆԱՊԱՀՈՒԹՅՈՒՆ

Դաբաղը Հայաստանին չի սպառնում

ԵՐԵՎԱՆ, 6 ՀՈՒՆԻՍ, ԱՐՄԵՆՊՐԵՍ: Մինչեւ արտացման շրջանը հանրապետության գյուղացիական տնտեսությունների ավելի քան մեկ միլիոն խոշոր եւ մանր եղջերավոր անասուններ ենթարկվել են հակահամաճարակային կանխարգելիչ պատվաստումների: Դա հնարավոր եղավ 2001 թ. պետբյուջեից հատկացված միջոցների շնորհիվ, որից 499 մլն դրամն ուղղվել է ՌԴ-ից բուժական կենսապատվաստակների եւ ախտորոշիչ միջոցների ձեռքբերմանը:

Գյուղատնտեսության նախարարության անասնաբուժական պետական տեսչության գլխավոր մասնագետ Էդուարդ Ստեփանյանի ասելով, բուժանյութերը համամասնորեն բաշխվել են տարածաշրջանային «Անասնաբուժական սպասարկման կենտրոն» ՊՓԲ ընկերություններին:

Նրա հավաստմամբ, դաբաղը Հայաստանին չի սպառնում: Տեսչության ձեռնարկած միջոցառումների շնորհիվ առայժմ հանրապետությունն ապահով է կենդանիների խիստ վտանգավոր եւ վարակիչ հիվանդությունների ներթափանցումից: Այդ ուղղությամբ մինչեւ օրս անհանգստացնող դեպք չի արձանագրվել: Այն երկրներում (Ֆրանսիա, Անգլիա, Բրազիլիա, Մոնղոլիա), որտեղ դեռեւս առկա է դաբաղը, Միջազգային հակահամաճարակային կազմակերպության կողմից ժամանակավորապես արգելվել է անասուններին կենդանի վիճակում դուրս բերելն ու դրանցից ստացված բոլոր տեսակի հումքի, մթերքի եւ մսաոսկրային ալյուրի արտահանումը:

ՀՀԿ-ն ինքն էլ չի հասկանում, թե ինչ է ուզում... իրենից

Ինքնաբացահայտման որոնումների լաբիրինթոսում նա իր դեմքն է կորցնում

Եթե որեւէ ՀԺԿ-ականի սխալմամբ հարցնես, թե ո՞րն է իրենց կուսակցության ծրագիրը, անպայման վկայակոչելու է «Միասնությանը»: Իսկ թե ո՞րն է դաշինքի ծրագիրը... այս հարցի պատասխանը չի տրվում արդեն երեք տարի: Թե ինչ է նշանակում անծրագիր կուսակցություն, այն էլ իշխանություն ներկայացնող, զուտ քաղաքագիտության առումով առնվազն անհեթեթություն է պատկերացնելը: Սակայն միայն քաղաքագիտական առումով: Մեր քաղաքական իրականությունը, որը «շատ ավելի է կայացած» քան ցանկացած գիտական տեսություն, փաստում է, որ անծրագիր իշխանություն, ի դեմս ՀԺԿ-ի, ոչ միայն հնարավոր է, այլեւ օրինաչափ:

ՀԺԿ-ականներն անպայման կվիճարկեն վերոշարադրյալը եւ գուցե պնդեն, թե իրենք իշխանություն չեն, քանի որ գործադիր իշխանության մեջ լծակներ չունեն եւ փաստորեն իրենց ծրագրերը (մեծ վերապահումներով- Գ. Ա.) չեն կարողանում իրագործել: Սակայն ամոթ չլինի հարցնելը, եթե իշխանություն չեն, ապա ի՞նչ են՝ ընդդիմությո՞ւն, այդ ե՞րբ հաստատեցին՝ արդեն երկրորդ համագումարն անցկացնելուց հետո անգամ: Հենց այդ նույն անծրագրայնության հետեւանքն է, որ ՀԺԿ-ն չհամարձակվեց նման հայտարարություն անել... Ի վերջո արանքում Ազգային ժողովի նախագահի ու փոխնախագահի աթոռները պահպանելու խնդիր կար, որ քաղաքականապես չամրացած ՀԺԿ-ն ավելի է գուցե կարեւորում, քան Կարեն Դեմիրճյանի եւ Վազգեն Սարգսյանի համատեղ մշակած ոչ թե ծրագիրը, այլ որոշակի ուղղությունը, որը իբր փորձում է իրագործել ՀՀԿ-ն: Մի բան, որ չանելով հանդերձ, ՀԺԿ-ն ամեն կերպ պահանջում է դաշնակցից գործադիր իշխանությունում իրեն լծակներ տրամադրել՝ միաժամանակ նույն համագումարում պարզ հայտարարելով, թե վարչապետն իրենը չէ: Անկեղծ լինենք՝ որեւէ տրամաբանություն ՀԺԿ-ականների գործելակերպում չկա: Պահի տակ կարող են եւ պայտին խփել, եւ մեխին, ու չես հասկանում, թե քաղաքական դաշտից այս կուսակցությունն ինչ է ուզում: Մի բան, այնուամենայնիվ, ակնհայտ է. ամեն ինչ անել հաջորդ ընտրություններին դարձյալ խորհրդարան ընկնելու համար: Եվ հենց այս նպատակով շահարկելու էին ամեն ինչ՝ ընտրելով դրա համար ամենահարմար գործելաոճը լինել եւ «դիմություն», եւ ընդդիմություն, եւ կենտրոնամետ, եւ ոչ կենտրոնամետ: Օրինակ, նույն կուսակցության ներկայացուցիչ Արամայիս Բարսեղյանը կարող է ասել, որ անծրագիր իշխանություն, ի դեմս ՀԺԿ-ի, ոչ միայն հնարավոր է, այլեւ օրինաչափ: Ասոս Սանուչարյանին եւ նրա ստեղծած Ազգային համաձայնության ճակատը հիացած փառաբանել, պատեհ անպատեհ առիթներով վարչապետին քարկոծել, առանց որեւէ հիմի «Հոկտեմբերի 27»-ի ոճրագործության մեղքն իշխանությունների վրա բարդել (լինելով նույն իշխանության ներկայացուցիչ այնքանով, որքանով ԱԺ մեծամասնության մաս է կազմում), Արմեն Խաչատրյանը «ձեռքերը լվացած» իշխանություններին կծու» խոսք չի ասում, Գագիկ Ասլանյանը կատարյալ միջանկյալություն է պահպանում, իսկ Ստեփան Դեմիրճյանն էլ հարմար առիթով ընդդիմություն է, մյուս հարմար առիթով՝ իշխանություն: Ստացվել է այնպես, որ ՀԺԿ-ն քաղաքական դաշտում «մնահաճ օրիորդ» է դարձել, որի ցանկությունները չբավարարվելու դեպքում սկսում է լաց ու կոծը: Ասենք՝ ինչո՞ւ ՀՀԿ-ն պիտի հայտարարի, թե ինքը երկրի կայունությունը չխաթարելու համար ստիպված պիտի համակերպվի ՀԺԿ-ի ներկայությանը «Միասնության» շրջանակներում, իսկ այս կուսակցությունն ավելորդ կրքեր է բորբոքում, ասենք, «Հոկտեմբերի 27»-ի գործը եւ դատավարությունը շահարկելով: Ողջ համագումարում հնչած միակ հստակ տեսակետն այն էր, որ իրենք դժգոհ են դատավարության ընթացքից եւ ոճրագործներին հանդարտեցնելու համար նրանք ստեղծած Ազգային համաձայնության ճակատը հիացած փառաբանել, պատեհ անպատեհ առիթներով վարչապետին քարկոծել, առանց որեւէ հիմի «Հոկտեմբերի 27»-ի ոճրագործության մեղքն իշխանությունների վրա բարդել (լինելով նույն իշխանության ներկայացուցիչ այնքանով, որքանով ԱԺ մեծամասնության մաս է կազմում), Արմեն Խաչատրյանը «ձեռքերը լվացած» իշխանություններին կծու» խոսք չի ասում, Գագիկ Ասլանյանը կատարյալ միջանկյալություն է պահպանում, իսկ Ստեփան Դեմիրճյանն էլ հարմար առիթով ընդդիմություն է, մյուս հարմար առիթով՝ իշխանություն: Ստացվել է այնպես, որ ՀԺԿ-ն քաղաքական դաշտում «մնահաճ օրիորդ» է դարձել, որի ցանկությունները չբավարարվելու դեպքում սկսում է լաց ու կոծը: Ասենք՝ ինչո՞ւ ՀՀԿ-ն պիտի հայտարարի, թե ինքը երկրի կայունությունը չխաթարելու համար ստիպված պիտի համակերպվի ՀԺԿ-ի ներկայությանը «Միասնության» շրջանակներում, իսկ այս կուսակցությունն ավելորդ կրքեր է բորբոքում, ասենք, «Հոկտեմբերի 27»-ի գործը եւ դատավարությունը շահարկելով: Ողջ համագումարում հնչած միակ հստակ տեսակետն այն էր, որ իրենք դժգոհ են դատավարության ընթացքից եւ ոճրագործներին հանդարտեցնելու համար: Հենց այդ նույն անծրագրայնության հետեւանքն է, որ ՀԺԿ-ն չհամարձակվեց նման հայտարարություն անել... Ի վերջո արանքում Ազգային ժողովի նախագահի ու փոխնախագահի աթոռները պահպանելու խնդիր կար, որ քաղաքականապես չամրացած ՀԺԿ-ն ավելի է գուցե կարեւորում, քան Կարեն Դեմիրճյանի եւ Վազգեն Սարգսյանի համատեղ մշակած ոչ թե ծրագիրը, այլ որոշակի ուղղությունը, որը իբր փորձում է իրագործել ՀՀԿ-ն: Մի բան, որ չանելով հանդերձ, ՀԺԿ-ն ամեն կերպ պահանջում է դաշնակցից գործադիր իշխանությունում իրեն լծակներ տրամադրել՝ միաժամանակ նույն համագումարում պարզ հայտարարելով, թե վարչապետն իրենը չէ: Անկեղծ լինենք՝ որեւէ տրամաբանություն ՀԺԿ-ականների գործելակերպում չկա: Պահի տակ կարող են եւ պայտին խփել, եւ մեխին, ու չես հասկանում, թե քաղաքական դաշտից այս կուսակցությունն ինչ է ուզում: Մի բան, այնուամենայնիվ, ակնհայտ է. ամեն ինչ անել հաջորդ ընտրություններին դարձյալ խորհրդարան ընկնելու համար: Եվ հենց այս նպատակով շահարկելու էին ամեն ինչ՝ ընտրելով դրա համար ամենահարմար գործելաոճը լինել եւ «դիմություն», եւ ընդդիմություն, եւ կենտրոնամետ, եւ ոչ կենտրոնամետ: Օրինակ, նույն կուսակցության ներկայացուցիչ Արամայիս Բարսեղյանը կարող է

Ինքնաբացահայտման որոնումների լաբիրինթոսում նա իր դեմքն է կորցնում

ասել, որ անծրագիր իշխանություն, ի դեմս ՀԺԿ-ի, ոչ միայն հնարավոր է, այլեւ օրինաչափ:

ՀԺԿ-ականներն անպայման կվիճարկեն վերոշարադրյալը եւ գուցե պնդեն, թե իրենք իշխանություն չեն, քանի որ գործադիր իշխանության մեջ լծակներ չունեն եւ փաստորեն իրենց ծրագրերը (մեծ վերապահումներով- Գ. Ա.) չեն կարողանում իրագործել: Սակայն ամոթ չլինի հարցնելը, եթե իշխանություն չեն, ապա ի՞նչ են՝ ընդդիմությո՞ւն, այդ ե՞րբ հաստատեցին՝ արդեն երկրորդ համագումարն անցկացնելուց հետո անգամ: Հենց այդ նույն անծրագրայնության հետեւանքն է, որ ՀԺԿ-ն չհամարձակվեց նման հայտարարություն անել... Ի վերջո արանքում Ազգային ժողովի նախագահի ու փոխնախագահի աթոռները պահպանելու խնդիր կար, որ քաղաքականապես չամրացած ՀԺԿ-ն ավելի է գուցե կարեւորում, քան Կարեն Դեմիրճյանի եւ Վազգեն Սարգսյանի համատեղ մշակած ոչ թե ծրագիրը, այլ որոշակի ուղղությունը, որը իբր փորձում է իրագործել ՀՀԿ-ն: Մի բան, որ չանելով հանդերձ, ՀԺԿ-ն ամեն կերպ պահանջում է դաշնակցից գործադիր իշխանությունում իրեն լծակներ տրամադրել՝ միաժամանակ նույն համագումարում պարզ հայտարարելով, թե վարչապետն իրենը չէ: Անկեղծ լինենք՝ որեւէ տրամաբանություն

ՀԺԿ-ականների գործելակերպում չկա: Պահի տակ կարող են եւ պայտին խփել, եւ մեխին, ու չես հասկանում, թե քաղաքական դաշտից այս կուսակցությունն ինչ է ուզում: Մի բան, այնուամենայնիվ, ակնհայտ է. ամեն ինչ անել հաջորդ ընտրություններին դարձյալ խորհրդարան ընկնելու համար: Եվ հենց այս նպատակով շահարկելու էին ամեն ինչ՝ ընտրելով դրա համար ամենահարմար գործելաոճը լինել եւ «դիմություն», եւ ընդդիմություն, եւ կենտրոնամետ, եւ ոչ կենտրոնամետ: Օրինակ, նույն կուսակցության ներկայացուցիչ Արամայիս Բարսեղյանը կարող է

կոչ իրավապահների գործունեությունից: Եվ սիրեցին ԱԺ-ին ինչ-որ ժամանակավոր հանձնաժողով ստեղծել, որի գործունեությունը պիտի ճշմարտությունը բացահայտելը լինի՝ օժանդակո՞ւմ են ոճրագործներին, թե՞ ոչ: Հարց, որ առկա էր գործի նախաքննությունից ի վեր, եւ սակայն այն ժամանակ ՀԺԿ-ն համարձակություն չունեցավ նման նախաձեռնություն սկսելու: Հետաքրքիր է, արդյոք կարեւորն այն է, թե ո՞վ է բացահայտելու իրականությունը, բացահայտվելո՞ւ է ընդհանրապես , թե՞ ոչ: Պարզվում է, ՀԺԿ-ի համար խիստ կարեւորն առաջին հարցն է, որի բացահայտումը դժգոհ նրանք նեղացան խումբ-խմբակցություններից, անգամ հանձնաժողովից իրենց անդամներին հետ կանչելու, հանձնաժողովի գործունեությունը բոյկոտելու տեսակետներ հնչեցրին: Եվ այդ ամենը հանուն ինչի՞: Արդյոք ՀԺԿ-ն իսկապե՞ս լրջորեն մտածում է, թե դատավարության արդարացի ելքով ինքն ավելի շատ է մտահոգված, քան մյուս քաղաքական ուժերը եւ հենց ինքն է «բարձրյալի կողմից ընտրված» այն ուժը, որը պետք է տեր կանգնի գործի բացահայտմանը: Հազիվ թե: Պարզապես ՀԺԿ-ն քաղաքական դաշտում ներկայանալու այլեւս ոչինչ չունի, եւ իրեն հիշեցնելու համար չի կանգնի անգամ «Հոկտեմբերի 27»-ի դատավարությունը, իրենց խոսքերով՝ «նահատակվածների արյունը» շահարկելու առաջ:

ՀԺԿ-ի վերջին երկու տարվա գործունեությունը հաստատում է, որ կուսակցությունն իր տեղը չի գտնում քաղաքական դաշտում հենց նույն անսկզբունքայնության պատճառով: Իսկ համագումարը ոչինչ չփոխեց, ոչինչ չավելացրեց, այլ միայն հաստատեց, որ նույն հեղհեղուկ, ամորֆ քաղաքականությունը ՀԺԿ-ն շարունակելու է անընդհատ՝ քաղաքական դաշտում նորանոր խնդիրներ առաջացնելով:

ԳՈՌ ԱԲՐԱՀԱՄՅԱՆ

ՄԻՋԽՈՐՀՐԴԱՐԱՆԱԿԱՆ

Այսօր Հայաստան է ժամանում ՌԴ Պետդումայի պատվիրակությունը

Գենադի Սելեզնյովի գլխավորությամբ

Հայ-ռուսական համագործակցության հարցերի ամենալայն շրջանակ նախատեսվում է քննարկել հունիսի 7-10-ը Ռուսաստանի Դաշնության Պետական դումայի՝ նախագահ Գենադի Սելեզնյովի գլխավորած պատվիրակության Հայաստան կատարելիք պաշտոնական այցի ընթացքում:

Այս եւ պատվիրակության այցի ծրագրի մասին **«Ազգը»** մանրամասն գրել է նախորդ համարում: Միայն հավելենք, որ նախապես ծրագրված էր, որ Դումայի պատվիրակության այցը կավարտվի շաբաթ օրը: Մինչդեռ Բելգիա պաշտոնա-

կան այցով մեկնած ՀՀ նախագահ Ռոբերտ Քոչարյանը վերադառնում է հունիսի 9-ին՝ նույն օրը: Կարեւորելով հայ-ռուսաստանյան կապերը, պետության ղեկավարը ցանկություն է հայտնել անպայման հանդիպելու դումայականների հետ: Ուստի կողմերի համաձայնությամբ ՌԴ պատվիրակության այցը երկարացվեց մեկ օրով, եւ ՀՀ նախագահի հետ նրա հանդիպումը տեղի կունենա շաբաթ առավոտյան: Մամլո ասուլիսից հետո հյուրերը կմեկնեն Մոսկվա:

Հիշեցնենք, որ Գենադի Սելեզնյովը ներկա պատգամավորական դասակազմում արդեն երկու անգամ եղել է Երեւանում: 1996 թ. մայիսի 6-7-ը նա գլխավորել է ՌԴ Պետական դումայի պատվիրակությունը, իսկ 1999 թ. հոկտեմբերի 30-ին ՌԴ ղեկավարության պատվիրակության կազմում էր, որը Հայաստան էր ժամանել մասնակցելու Կարեն Դեմիրճյանի, Վազգեն Սարգսյանի, հանրապետության խորհրդարանի դահլիճում տեղի ունեցած ահաբեկչության զոհ դարձած այլ պետական գործիչների հետ հրաժեշտի արարողությանը:

Գենադի Նիկոլայեւիչ Սելեզնյովը 1993 թ. ընտրվել է ՌԴ Պետական դումայի պատգամավոր եւ մինչեւ 1995 թ. զբաղեցրել պալատի տեղեկատվական քաղաքականության ու կապի կոմիտեի փոխնախագահի պաշտոնը: 1995 թ. հունվարից ընտրվել է Դումայի փոխնախագահ եւ Ռուսաստանի Դաշնության կոմկուսի կենտկոմի քարտուղար:

1995 թ. դեկտեմբերին կրկին ընտրվել է Դումայի կազմում: 1996 թ. հունվարի 17-ից Դումայի նախագահն է: 2000 թ. հունվարի 19-ին նորից ընտրվել է այդ պաշտոնում:

Գենադի Սելեզնյովը Բելառուսի ու Ռուսաստանի միության խորհրդարանական ժողովի նախագահն է, ՌԴ միջխորհրդարանական խմբի փոխնախագահը, ԵԱՀԿ խորհրդարանական վեհաժողովի փոխնախագահը, ԱՊՀ միջխորհրդարանական վեհաժողովի խորհրդի անդամ, Բելառուսի, Ղազախստանի, Կիրգիզիայի, Ռուսաստանի ու Տաջիկստանի միջխորհրդարանական կոմիտեի փոխնախագահը: Սույն թվականի հունվարին նախաձեռնել ու գլխավորել է «Ռուսաստան» ծախ ժողովրդավարական շարժումը:

ՏԻԳՐԱՆ ԼԻԼՈՅԱՆ
ՌՏԱՌ-ՏԱՍՍ-ի թղթակից
«Ազգի» համար

Նոր ծրագրեր ՀԲ-ի նախաձեռնությամբ

Համաշխարհային բանկի եւ ՀՀ կառավարության մասնակցությամբ կազմված գործողությունների ազգային ծրագրի շրջանակներում նախատեսվում են բնապահպանական գյուղատնտեսական ծրագրեր Գեղարքունիքի մարզի մի քանի համայնքներում: Այս նպատակով երեկ Գեղարքունիքում էին ՀԲ-ի փորձագետները՝ խմբի ղեկավար Ադրիանա Բուրյանովայի գլխավորությամբ: Մարզպետ Վահագն Հակոբյանի հետ հանդիպման ժամանակ քննարկվեցին գյուղատնտեսության եւ բնապահպանության առկա հիմնախնդիրներն ու դրանց լուծման հնարավոր ճանապարհները: Այս ոլորտներում, մասնավորապես, հողերի որակը վերականգնելու եւ անտառներ հիմնելու նպատակով ՀԲ-ն պատրաստ է տրամադրել ցածր տոկոսադրույքներով վարկեր եւ դրամաշնորհներ: Ծրագրի հիմնական նպատակը բնական ռեսուրսների ծիշտ կառավարումն է, ինչը, ըստ փորձագետների, նպաստելու է նաեւ չքավորության նվազեցմանը: Խմբի ղեկավարը տեղեկացրեց, որ գրեթե մեկ տարի իրենք ուսումնասիրություններ են կատարում մարզի համայնքներում եւ ղեկավարների հետ ճշտում համայնքի մասնակցության չափը կատարվելիք ծրագրերում, որոնք կսկսեն իրականացնել 2002 թ. գարնանից: Իսկ մինչ այդ մարզպետի հետ պայմանավորվածություն ձեռք բերվեց, մինչեւ փետրվար ամիսը համայնքներում ստեղծել աշխատանքային խմբեր, որոնց համագործակցությամբ եւ աջակցությամբ պետք է իրականացվեն նախատեսվելիք ծրագրերը:

ՏԻԳՐԱՆ ՀԱԿՈԲՅԱՆ

Ինչպիսին պետք է լինի առեւտրաարդյունաբերական պալատը

Գաղտնիք չէ, որ Հայաստանի առեւտրաարդյունաբերական պալատն այն գործառույթները, որ ունենում են նմանատիպ կառույցներն ամբողջ աշխարհում, չի կատարում: Եվ չէր էլ կարող կատարել, քանի որ օրենքով սահմանված չեն նրա կարգավիճակը, կազմավորման եւ անդամակցության սկզբունքները: Այդ բացը լրացնելու նպատակով վերջերս կառավարության եւ մի խումբ պատգամավորների նախաձեռնությամբ Ազգային ժողովի քննարկմանը ներկայացվեց «Առեւտրաարդյունաբերական պալատի մասին» օրենքի նախագիծը: Ըստ այդ նախագծի, պալատի գործունեությունը պետությունը որեւէ կերպ չպետք է ուղղորդի: Այս պայմանը խորհրդարանականները, հատկապես գործարար ոլորտում ընդգրկված պատգամավորները, էական էին համարում եւ պնդում դրա պահպանումը: Նրանց հիմնական մտավախությունն է, որ կստեղծվի կոռումպացված հերթական կառույցը: Այս տեսակետի հեղինակներն այն կարծիքին են, որ անդամությունը պալատներին պետք է լինի կամավոր: Այսինքն՝ տնտեսվարող սուբյեկտներն իրենց նախաձեռնությամբ պետք է միավորվեն եւ ստեղծեն պալատ, որը կկարողանա իրենց ընդհանուր շահերը ներկայացնել հասարակական կյանքում: Նման սկզբունքներով են գործում ամերիկյան եւ անգլիական առեւտրաարդյունաբերական պալատները:

Վերը հիշատակված հարցերի վերաբերյալ տրամագծորեն հակառակ տեսակետ է արտահայտում փոքր եւ միջին ձեռնարկությունների աջակցության ProSEM ծրագիրը Հայաստանում իրականացնող գերմանական GTZ կազմակերպությունը: Բնականաբար, որպես հիմք բերվում է Գերմանիայի առեւտրաարդյունաբերական պալատների մասին օրենսդրությունը: Ըստ GTZ-ի, անհրաժեշտ է, որ ձեռնարկությունների միությունը օժտվի պետական իրավունքներով: Այդ դեպքում ենթակա պետք է լինի պետական մասնագիտական վերահսկողությանը: Անդամությունն այդ կառույցին պետք է պարտադիր լինի: Միայն այս պայմանների առկայության դեպքում, գերմանական կազմակերպության կարծիքով, հնարավոր կլինի հետաքրքրություններ եւ շահերի համակշռումը, բոլորի շահերից բխող ծառայությունների մատուցումը պալատի կողմից: Կամավոր անդամության դեպքում «Ֆինանսապես հզոր անդամները կարող են սպառնալով դուրս գալ պալատից, ստիպել հաշվի առնել իրենց հատուկ հետաքրքրություններն ու շահերը», նշում է GTZ-ը: Սակայն հակապես խոցելի է առաջարկված այն դրույթը, համաձայն որի պարտադիր անդամության եւ պետական մասնակցության դեպքում գործարարների ձայնը կառավարության հետ բանակցություններում ավելի լսելի կդառնա, եթե նրանք ներկայանան մեկ միասնական կարծիքով: Սակայն այս դեպքում նկատի չի առնվում այլ հանգամանք, իսկ այդ կարծիքն իրո՞ք գործարարներինը կլինի, թե՞ «պետական վերահսկողության ենթակա» պալատինը: Ինչ վերաբերում է ֆինանսական հզոր անդամների հնարավոր ճնշմանը պալատում, ապա դա ուղղակի հնարավոր չի լինի հատկապես կամավոր միության դեպքում: Գործարարները որեւէ պարտավորություն այդ ժամանակ չեն ունենա՝ մնալու պալատի կազմում: Ընդհակառակը, ճնշումն ու նրա ազդեցությունն ավելի իրական կլինեն պարտադիր անդամության ժամանակ, երբ որեւէ մեկը չի կարող դուրս գալ միությունից: Եվ ընդհանրապես, ինչ է նշանակում պետական վերահսկողական ֆունկցիա թեկուզ միայն իրավական հարցերում: Եթե պալատը որեւէ օրենք է խախտելու, ապա գոյություն ունեն իրավապահ մարմիններ, որոնք պարտավոր են զբաղվել նման հարցերով: Իսկ որպեսզի թեկուզ ակամա դա տեղի չունենա, պալատը կարող է ունենալ իր իրավաբանական ծառայությունը: Եվ վերջ:

Կարծում ենք, իրական է նաեւ գործարարների այն մտահոգությունը, որ պարտադիր անդամության դեպքում վճարվող անդամավճարները կդառնան եւս մեկ հարկատեսակ: Այս տեսակետը GTZ-ը հերքում է, ասելով, որ անդամավճարը հարկատեսակից տարբերվում է նրանով, որ այդ գումարները տնօրինում է պալատի մարմինը, եւ ծառայելու են կանոնադրական ֆունկցիաներ կատարելու համար: Սակայն հարց է առաջանում՝ ի՞նչ կապ ունի պարտադիր անդամությունը կամ պետական վերահսկողությունն այդ դեպքում: Մի՞թե առանց դրանց պալատը չի կարող ընտրել իր գումարները տնօրինող մարմին:

Օրենքի առաջարկած նախագիծը, չնայած վերոհիշյալ դրույթների շուրջ որոշ հակասություններ է պարունակում, այնուամենայնիվ, հիմնական սկզբունքները կամավոր միավորմամբ եւ առանց պետական ուղղորդման առեւտրաարդյունաբերական պալատի ստեղծման մասին պահպանել է: Որոշակի հստակեցումից հետո այն պատրաստ կլինի երկրորդ ընթերցմամբ ընդունելու համար: Ինչ մնում է GTZ-ին, ապա չմոռանալով, որ կազմակերպությունը դրական աշխատանք է կատարում փոքր եւ միջին ձեռնարկությանն աջակցելու գործում, հարկ է նշել, որ առեւտրաարդյունաբերական պալատին վերաբերող նրա առաջարկները լուրջ քննադատությանը չեն դիմանում եւ Հայաստանի համար կիրառելի չեն:

ԱԲԱ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ

հակասություններ

Գեղարքունիքի մարզի նախկին Կրասնոսելսկի շրջանը հանրապետության այն վարչատարածքներից էր, որտեղ 1988-ից սկսած Ադրբեջանի տարբեր բնակավայրերից բռնագաղթածներ են բնակվել: Դրա պատճառներից թերեւս ամենագլխավորն այն է, որ շրջանի տասնութ գյուղերից տասնմեկն ադրբեջանցիներով է բնակեցված եղել, որոնք նույն ժամանակահատվածում առանց որեւէ ցուցումի կամ պարտադրանքի հայրենիք գաղթեցին: Ադրբեջանաբնակ գյուղերն որոնք Հայաստանի Հանրապետության խաղաքաղաքացիություն են ձեռք բերել:

1998-ից երկու փուլով եւ 99-ի աշնանը ՄԱԿ-ի ֆինանսավորմամբ շրջանի գյուղերում 33 անձնագրերի տրամադրման միջոցառումներ են կազմակերպվել: Ավելի քան 5 հազար փախստականներից 33 խաղաքաղաքացի է դարձել 2300-ը: Գործընթացը, թեեւ բավականին դանդաղ, այսօր էլ շարունակվում է: Տկն Երիցյանի կարծիքով, չէր խանգարի եւս մեկ անգամ նման միջոցառում կազմակերպել, սակայն խանգարող հանգամանքներ կան, որոնցից առաջինը կարելի է բնակչության ինչպես ներքին, այնպես էլ արտաքին տեղաշարժերը համարել:

Պրակտիկան ցույց է տալիս, որ հիմնականում Բաքվից, Սումգայիթից, Կիրովաբադից, Չարդախլուից բռնագաղթած եւ Կրասնոսելսկի շրջանում հաստատվածներն ամենաակտիվ արտագաղթողներն են: Ընդ որում, տարիների հետ տեմպերն արագանում են: Եթե 1999-ին անձնագրային բաժնից ելքի իրավունք ձեռք բերածների թիվը կազմում է 174 խաղաքաղաքացի, նախորդ տարի թիվը կրկնապատկվել է՝ 398 խաղաքաղաքացի: 2000-ին գրանցումից դուրս գալու 105 դիմում է ստացվել, ինչն ընդհանուր թվաքանակի համեմատությամբ աչքի զարնող թիվ է, եթե հաշվի առնենք, որ 1999-ին նման ընդամենը 68 դիմում է ստացվել: Իսկ այս տարվա առաջին եռամսյակի տվյալներով՝ երկրից հեռանալու եւ գրանցումից դուրս գալու արդեն 37 հայտ է ներկայացված: Եթե տեմպերը նույն մակարդակով շարունակվեն ողջ տարվա ընթացքում, ինչը սպասելի է, այս տարի շրջանից կհեռանան եւս 120 խաղաքաղաքացիներ:

Յուրահատկությունն այն է, որ մեկնում են արդեն տարեցները՝ արտերկրում բնակվող իրենց զավակների մոտ հաստատվելու, ինչը նշանակում է, որ նրանք այլեւս չեն վերադառնա: Այս խաղաքաղաքացիները մեկնում են հիմնականում Ռուսաստանի Դաշնություն՝ Սամարա, Մոսկվա, Կրասնոդար եւ այլն:

Առավել հաստատուն են շրջանի մշտական բնակություն ունեցողները, որոնք հիմնականում սահմանամերձ գյուղերի կարգավիճակ ունեն, Վահան, Ճամբարակ քաղաքը (նրան միացված երկու գյուղերով), Թքուզուր, Ջիլ: Ընտանիքներով հեռացողներ գրեթե չկան: Փոխարենն ակտիվ են միայնակ արտագնա աշխատանքի մեկնողները՝ բնականաբար դարձյալ Ռուսաստան: Նման պատկերությունը որքան ուրախալի լինի, այնուամենայնիվ, ունի պատճառ. մարդիկ մեկնելու համար պարզապես միջոցներ չունեն: Իսկ վերջին շրջանում դրսից (իմա՝ Ռուսաստանից) ֆինանսական օժանդակության հոսքը նվազել է: Արտագնա աշխատանքի մեկնողների մեջ մեծ տեղ են զբաղեցնում արծվաշենցիները, որոնք չնայած բնակարանային եւ գյուղատնտեսական լուրջ հիմնախնդիրների ծանրությանը, չեն լքում բնակավայրերը:

Պետք է արձանագրենք, սակայն, որ Ճամբարակի անձնագրային բաժնի պետի դիտարկումները խիստ պայմանական են: Խնդիրն այն է, որ ընդունված կարգի համաձայն արտագաղթողները հիմնականում շրջանցում են անձնագրային բաժինները եւ անլեգալ ճանապարհներով, հիմնականում Հայաստանից: Եվ պետական համապատասխան մարմիններին չի հաջողվում արտագաղթի ճշգրիտ պատկերն արձանագրել:

Արդարության դեմ մեղանչած չլինելու համար նշենք, որ Ճամբարակի տարածաշրջանում որոշակի ակտիվություն է նկատվում նաեւ ներքին շարժի հետ կապված: Մեկնում են հիմնականում հարակից մարզեր եւ շրջաններ՝ Տավուշ, Իջեւան, Վարդենիս, Նոյեմբերյան: Նկատենք, որ այս բնակավայրերում հաստատվողները հետեւողականորեն խուսափում են քաղաքներից, ինչը նշանակում է, որ գյուղից մեկնողների համար քաղաքները լուրջ կենսապայմաններ դեռեւս չեն կարող ապահովել: Սակայն այն հանգամանքը, որ 109 քաղաքացի հանրապետության տարբեր քաղաքներից եկել է Ճամբարակի ենթաշրջանում մշտական բնակություն հաստատելու, վկայում է, որ գյուղերն առավել կենսունակ են: Ընդ որում, այդ 109-ից 15 քաղաքացի եկել է մայրաքաղաքից:

Ինչեւէ, չնայած այս տեղաշարժին, Ճամբարակն իր հարակից գյուղերով շարունակում է գոյատեւել: Այստեղ բնակվողները գյուղատնտեսությամբ զբաղվելով որեւէ շահույթ կուտակելու ակնկալիքից հեռու են: Մարդիկ կատակով ասում են, թե «հողում ինչ ցանում ես, կարտոֆիլ է դուրս գալիս»: Իսկ կարտոֆիլի իրացման շուկան հիմնականում ապահովում էր տարածքում տեղաբաշխված զորամասը, որը վերջին շրջանում սկսել է սեփական ուժերով հոգալ իր սննդի (այդ թվում նաեւ կարտոֆիլի) պահանջները: Եթե սպառման այդ շուկան էլ վերանա, ցավալի կլինի պատկերացնել, թե ինչ է սպասում նախկին Կրասնոսելսկի շրջանի գյուղերի մեծ մասին: Դա էլ հիմք է տալիս բնակչությանն ասելու, թե այդ հատվածում Ադրբեջանի հետ սահմանի բացումը լրջորեն կարող է բարձրացնել բնակչության կենսամակարդակը: Ի վերջո, մինչեւ հակամարտության սկիզբը մեծածավալ ապրանքափոխանակությունը հարեւան այլազգիների հետ էապես էր անդրադառնում մարդկանց վիճակի վրա:

ԳՈՌ ԱԲՐԱՀԱՄՅԱՆ

Ճամբարակը դատարկվում է Ադրբեջանից բռնագաղթածներից

Մնացել էին միայն ծերերը... նրանք էլ են հեռանում

այնքիսի աշխարհագրական դիրքերում էին տեղաբաշխված, որոնք հողագործական աշխատանքների համար ողջ մարզում թերեւս ամենանպաստավորներից էին: Բնականաբար հենց այդ հանգամանքն էլ օգնեց այդ գյուղերում վերաբնակվածներին արագ հարմարվելու պայմաններին: Սակայն դա չխանգարեց հատկապես երիտասարդներին հեռանալու Հայաստանից, եւ այժմ նշված գյուղերում, ինչպես նաեւ ներկայիս Ճամբարակ քաղաքում, Ադրբեջանից բռնագաղթածներից գլխավորապես տարեցներն են մնացել: Ճամբարակի ներքին գործերի անձնագրային բաժնի պետ Անահիտ Երիցյանն այդ տպավորությունն է ստացել՝ անմիջական շփում ունենալով երկրից ելքի թույլտվություն ստացողների, ինչպես նաեւ այն փախստական ծերակերպվածների հետ շփվելիս, որոնք մեկնում են հիմնականում Ռուսաստանի Դաշնություն՝ Սամարա, Մոսկվա, Կրասնոդար եւ այլն:

Առավել հաստատուն են շրջանի մշտական բնակություն ունեցողները, որոնք հիմնականում սահմանամերձ գյուղերի կարգավիճակ ունեն, Վահան, Ճամբարակ քաղաքը (նրան միացված երկու գյուղերով), Թքուզուր, Ջիլ: Ընտանիքներով հեռացողներ գրեթե չկան: Փոխարենն ակտիվ են միայնակ արտագնա աշխատանքի մեկնողները՝ բնականաբար դարձյալ Ռուսաստան: Նման պատկերությունը որքան ուրախալի լինի, այնուամենայնիվ, ունի պատճառ. մարդիկ մեկնելու համար պարզապես միջոցներ չունեն: Իսկ վերջին շրջանում դրսից (իմա՝ Ռուսաստանից) ֆինանսական օժանդակության հոսքը նվազել է: Արտագնա աշխատանքի մեկնողների մեջ մեծ տեղ են զբաղեցնում արծվաշենցիները, որոնք չնայած բնակարանային եւ գյուղատնտեսական լուրջ հիմնախնդիրների ծանրությանը, չեն լքում բնակավայրերը:

Պետք է արձանագրենք, սակայն, որ Ճամբարակի անձնագրային բաժնի պետի դիտարկումները խիստ պայմանական են: Խնդիրն այն է, որ ընդունված կարգի համաձայն արտագաղթողները հիմնականում շրջանցում են անձնագրային բաժինները եւ անլեգալ ճանապարհներով, հիմնականում Հայաստանից: Եվ պետական համապատասխան մարմիններին չի հաջողվում արտագաղթի ճշգրիտ պատկերն արձանագրել:

Արդարության դեմ մեղանչած չլինելու համար նշենք, որ Ճամբարակի տարածաշրջանում որոշակի ակտիվություն է նկատվում նաեւ ներքին շարժի հետ կապված: Մեկնում են հիմնականում հարակից մարզեր եւ շրջաններ՝ Տավուշ, Իջեւան, Վարդենիս, Նոյեմբերյան: Նկատենք, որ այս բնակավայրերում հաստատվողները հետեւողականորեն խուսափում են քաղաքներից, ինչը նշանակում է, որ գյուղից մեկնողների համար քաղաքները լուրջ կենսապայմաններ դեռեւս չեն կարող ապահովել: Սակայն այն հանգամանքը, որ 109 քաղաքացի հանրապետության տարբեր քաղաքներից եկել է Ճամբարակի ենթաշրջանում մշտական բնակություն հաստատելու, վկայում է, որ գյուղերն առավել կենսունակ են: Ընդ որում, այդ 109-ից 15 քաղաքացի եկել է մայրաքաղաքից:

Ինչեւէ, չնայած այս տեղաշարժին, Ճամբարակն իր հարակից գյուղերով շարունակում է գոյատեւել: Այստեղ բնակվողները գյուղատնտեսությամբ զբաղվելով որեւէ շահույթ կուտակելու ակնկալիքից հեռու են: Մարդիկ կատակով ասում են, թե «հողում ինչ ցանում ես, կարտոֆիլ է դուրս գալիս»: Իսկ կարտոֆիլի իրացման շուկան հիմնականում ապահովում էր տարածքում տեղաբաշխված զորամասը, որը վերջին շրջանում սկսել է սեփական ուժերով հոգալ իր սննդի (այդ թվում նաեւ կարտոֆիլի) պահանջները: Եթե սպառման այդ շուկան էլ վերանա, ցավալի կլինի պատկերացնել, թե ինչ է սպասում նախկին Կրասնոսելսկի շրջանի գյուղերի մեծ մասին: Դա էլ հիմք է տալիս բնակչությանն ասելու, թե այդ հատվածում Ադրբեջանի հետ սահմանի բացումը լրջորեն կարող է բարձրացնել բնակչության կենսամակարդակը: Ի վերջո, մինչեւ հակամարտության սկիզբը մեծածավալ ապրանքափոխանակությունը հարեւան այլազգիների հետ էապես էր անդրադառնում մարդկանց վիճակի վրա:

ԳՈՌ ԱԲՐԱՀԱՄՅԱՆ

«Նոր հայերը» նախընտրում են թանկարժեք «Մերսեդես-Բենց»

Ավտոմեքենաների վաճառքի 1 տարվա պլանը՝ 4 ամսում, գնորդների 95 տոկոսը՝ գործարարներ

Հայաստանի ներդրումներին նվիրված նյույորքյան համաժողովում ներկայացված մոտ երեք տասնյակ բիզնես-ծրագրերի շարքում լավագույններից մեկը համարվել է Հայաստանում տրանսպորտային լիզինգային բաժնետիրական ընկերություն ստեղծելու բիզնես-ծրագիրը, որի շուրջ ներկայումս բանակցում են պոտենցիալ ներդնողները: Ծրագիրը ներկայացրել էր «Ինտերմոստր-Արմենիա» ընկերությունը՝ «Դայմլեր-Քրայսլեր» ավտոմոբիլային գերկոնցեռնի գլխավոր ներկայացուցիչը Հայաստանում: Ըստ ընկերության նախագահ Մարտին Հովհաննիսյանի, ծրագրի էությունը հետեւյալն է. մի քանի ներդնողների նախնական կապիտալով ստեղծվում է բաժնետիրական ընկերություն, որը այդ նախնական գումարով (որը կարող է լինել 1 մլն դոլար կամ 15 մլն) ձեռք է բերում տրանսպորտային միջոցներ ու լիզինգով տրամադրում ցանկացողներին: Նախնական մարկետինգի համաձայն, Հայաստանը ներկայումս խիստ կարիք ունի տրանսպորտային միջոցների բարձրացման: Ծրագիրը ենթադրում է լիզինգ մի քանի ոլորտներում՝ միջքաղաքային եւ ներքաղաքային տրանսպորտ, տուրիստական ընկերություններ, ավտոմեքենաների վարձակալում (rent car), բեռնափոխադրումներ եւ այլն: Ինչպես հետո մանրամասնեց «Ինտերմոթոր-Արմենիայի» գործադիր տնօրեն Լեւոն Արեւշատյանը, լիզինգային ընկերությունը ենթադրում է լիզինգի երկարաժամկետ վճարման ճկուն մեխանիզմ: Եթե 33 այլ ոլորտներում լիզինգային գործունեություն իրականացնելու համար անհրաժեշտ է լիզինգի մասին օրենք, ապա տրանսպորտային միջոցների դեպքում՝ ոչ, քանի որ կա դրանց գրանցման համակարգ (պետավտոտեսչություն), ինչը ապահովագրության օրենքի եւ քաղաքացիական օրենսգրքի հետ լիովին թույլ է տալիս զբաղվելու տրանսպորտային միջոցների լիզինգով: Ըստ պրն Արեւշատյանի, եթե հաջողվեն ներկայումս բանակցության ընթացքում գտնվող մեկ այլ՝ ավելի էժան ավտոմոբիլային արեւմտյան ընկերության հետ բանակցությունները, չի բացառվում նաեւ, որ ապագա ընկերությունը զբաղվի ոչ միայն բարձրակարգ մեքենաների լիզինգով: Ընդհանրապես, ըստ Լ. Արեւշատյանի, վերոհիշյալ բիզնես-ծրագիրն ամենաիրատեսականն ու հեռանկարայինը կարող է դառնալ Հայաստանի համար՝ ելնելով հենց «Ինտերմոստր-Արմենիայի» վիճակագրությունից, որը լիովին գոհացուցիչ է ներդնողների համար:

Հայաստանը «Մերսեդես-Բենցի» լավագույն աղաքաղներից է

«Դայմլեր-Քրայսլեր» ավտոմոբիլային գերկոնցեռնի գլխավոր ներկայացուցիչությունը՝ «Ինտերմոստր-Արմենիա» հայ-լիբանանյան ընկերությունը, Հայաստանում հիմնվել է 1998 թ.-ին: Ընկերության բաժնետոմսերի 75 տոկոսը պատկանում է Մարտին Հովհաննիսյանին, 25 տոկոսը՝ լիբանանյան «Ասմար գրուպ» կոնցեռնին, կանոնադիր կապիտալը 6 մլն դոլար է, մինչ այժմ կատարված ներդրումները՝ 4 մլն: Ընկերությունում այժմ աշխատում է 60 մարդ: Անցյալ տարի մայիսի 27-ին հանդիսավորությամբ բացվեց Գայի պողոտայի ավտոսրահը: Ուղիղ մեկ տարի անց ընկերության վաճառքի ցուցանիշները ապացուցում են, որ «նոր հայերը» սիրում են «Մերսեդես-Բենց», ընդ որում՝ բարձրակարգ: «Ինտերմոստր-Արմենիայի» տվյալներով, երկրորդ տարում



արդեն ընկերությունն աշխատում է շահույթով: Ըստ Լ. Արեւշատյանի, այս տարվա հունվարից մինչեւ ապրիլի 30-ը ընկերության մաքուր շահույթը կազմել է 50 մլն դրամ: Եթե անցյալ տարի իրականացվել է 2 մլն դոլարի վաճառք, ապա այս տարվա առաջին եռամսյակում արդեն՝ 1,5 մլն դոլարի, եւ եթե նկատի ունենանք, որ հունվար-ապրիլ ամիսները բիզնեսի առումով «մեռյալ» ամիսներ են, ապա կարելի է ենթադրել, թե մինչեւ տարեվերջ ի՞նչ ցուցանիշներով կփակի ընկերությունն իր տարեկան պլանը: Ըստ պրն Արեւշատյանի, վաճառված նոփնոր «Մերսեդես»-ները 90 տոկոսով բարձրակարգ մեքենաներ են: «Մերսեդես-Բենցի» հինգ կարգի մեքենաներից (առաջին՝ A-class, երկրորդ՝ C, երրորդ՝ E եւ վերջին՝ S) Հայաստանում մինչեւ այժմ վաճառվել են գրեթե միայն S-class-ի թանկարժեք մեքենաներ (գները՝ 20-80 հազ. դոլար եւ ավելի): Ընդ որում, վաճառված բարձրակարգ մեքենաների թվում կան նաեւ ամենավերջին՝ G-class-ի մեքենաներ, ինչպես նաեւ «Mercedes-Jeep»-եր, որոնցից ամենաթանկը S կարգի քառակուսի «Ջիփ»-երն են: Պրն Արեւշատյանը չէր կարող խուսափել «Ովքե՞ր են գնորդները» հարցից: Ըստ նրա, իրենց ընկերությունը նման է բանկի, որը փակ է պահում իր հաճախորդների մասին տվյալները: Նշվեց միայն, որ գնորդների 95 տոկոսից ավելին գործարարներ են: Հետաքրքիր է, որ, թեեւ կառավարության ու մի քանի նախարարությունների ավտոմոբիլային պարկը (մեր ունեցած տվյալներով) վերջին շրջանում համալրվել է նոր մեքենաներով, սակայն, ըստ պրն Արեւշատյանի, մինչեւ այժմ իրենց մոտ պետբյուջեից ոչ մի մեքենայի գնում չի կատարվել: Ընկերությունը գոհ է նաեւ սպասարկման ծառայությունից. օրական սպասարկման կենտրոնում վերանորոգվում է 8–12 ավտոմեքենա:

Վերոհիշյալ ցուցանիշներով, փաստորեն, «Ինտերմոստրը» համարվել է «Դայմլեր-Քրայսլերի» լավագույն դիլերը Կովկասում: Ընդհանրապես, կոնցեռնն իր արտադրությունը պլանավորում է յուրաքանչյուր երկրի վաճառքի պլաններից ելնելով: Յուրաքանչյուր դիլեր ունի ինչպես տարեկան, այնպես էլ եռամսյա պլան՝ ըստ մոդելների, շարժիչների հզորության եւ այլ պարամետրերի: Հայաստանյան ներկայացուցչությունը Անդրկովկասում ամենավերջինն է, սակայն այսօր արդեն կատարել է Վրաստանի դիլերի վաճառքի ծավալների մոտ 400 տոկոսը եւ մրցում է Ադրբեջանի ներկայացուցչի հետ, որը նավթի եւ այլ գործոնների առկայությամբ ավելի հարուստ շուկա է համարվում:

Մի հետաքրքիր փաստ եւս՝ մինչեւ այժմ ընկերության վաճառքի հանած եւ ոչ մի բեռնատար մեքենա չի վաճառվել, ինչն ապացուցում է, որ «Մերսեդեսի» իրացման բարձր ցուցանիշները բնավ ոչ երկրի ընդհանուր գնողունակության բարձրացման կամ տնտեսության աճխուժացման արդյունք չեն. ընդհանրապես, նման կարգի ցուցանիշները, ինչ-որ տեղ երկրի տնտեսության բարոմետր կարելի է համարել ու պատկերացում կազմել երկրում առկա միտումների մասին: Եթե նկատի ունենանք նաեւ, որ երկիր են մուտք գործում նաեւ այլ ճանապարհներով վերոհիշյալ մակնիշի մեքենաներ, ապա կարելի է միայն արձանագրել, որ Հայաստանում կա ձեւավորված մի գնողունակ խավ, որն իրեն թույլ է տալիս ապրելու միջին ու հարուստ եվրոպացու բարեկեցության չափանիշներով:

ԳԱՅԱՆԵ ՄՈՒՔՈՅԱՆ

Միջազգային

ԱՅՍՕՐ

Նախագահական ընտրություններ Իրանում

Այսօր Իրանում տեղի են ունենում նախագահական 8-րդ ընտրությունները: Այս ընտրություններին իշխող վարչակարգի շրջանակներում եւ տարբեր քաղաքական հոսանքներից, կազմակերպություններից եւ անհատական նախաձեռնությամբ առաջադրվել էր 814 թեկնածու: Սակայն ընտրարշավին մասնակցելու իրավունք ստացավ 10-ը, այդ թվում երկրի ներկա նախագահ Մոհամադ Խաթամին:

Իրանում, ընտրությունների օրենքի համաձայն, նախագահական թեկնածուները պաշտոնապես կարող են ՆԳ նախարարությունում գրանցվել եւ մասնակցել ընտրարշավին Սահմանադրության պահապան խորհրդից (ՍՊԽ) «անցագիր» ստանալուց հետո միայն: Ըստ որոշ տվյալների, պահպանողականների ազդեցության ոլորտ հանդիսացող ՍՊԽ-ի 12 անդամներից միայն 5-ի դրական քվեով է հաստատվել Խաթամիի թեկնածությունը՝ մեկ բացակայի եւ մեկ ձեռնպահի պայմաններում, որը փաստորեն բարենորոգչական հոսանքից միակ հաստատված թկնածուն է: Ինչ վերաբերում է մնացած 9 թեկնածուների քաղաքական կողմնորոշմանը, ապա թեեւ բոլորն իրենց անկախ են հայտարարում, իրականում թերեւս մեկ-երկուսին կարելի է որոշ չափով անկախ համարել, մյուսները պահպանողական են: Թեկնածուներից ոչ մեկը, ներառյալ Խաթամին, հստակ ծրագիր չի ներկայացրել: Սակայն բոլոր թեկնածուներն էլ խիստ կարեւորում են դեռեւս նախորդ ընտրություններին բարեփոխիչների առաջ քաշած կարգախոսները քաղաքացիական հասարակության կառուցում, տնտեսական առաջընթաց եւ բնականոն հարաբերություններ բոլոր երկրների հետ:

Խաթամիի գլխավոր կարգախոսը դարձյալ ժողովրդավարության հաստատումն է եւ իրանցիների դերի կարեւորումը երկրի կառավարման հարցում: Նա շեշտում է, որ ժողովուրդը խնամակալի կարիք չունի, մինչդեռ պահպանողականները գրեթե լիովին ժխտում են ժողովրդի դերը: Խաթամին իր գլխավոր նպատակն է համարում բարեփոխումների իրականացումը հասարակական, տնտեսական եւ գիտամշակութային ասպարեզներում:

Պահպանողական թեւի 4 ներկայացուցիչներ մյուսների համեմատությամբ որոշ իմաստով լուրջ թեկնածուներ են համարվում, որոնք իրականում կոչված են Խաթամիի քվեները փոշիացնելու: Նրանք են՝ Իսլամական ազատ համալսարանի ռեկտոր, 57-ամյա Աբդոլաի Ջասեբին, 50-ամյա տնտեսագետ Ահմադ Թավաքոլին, պաշտպանության նախարար Ալի Շամխանին, Ինժեներների իսլամական միության 56-ամյա անդամ Հասան Ղաֆուրիֆարդը: Ինչպես հայտնի է, պահպանողականներն այս ընտրություններին պաշտոնապես թեկնածու չեն ներկայացրել, ինչը թերեւս պետք է պայմանավորել նախ Խաթամիին լուրջ մրցակից ներկայացնելու անկարողությամբ, բացի այդ՝ ձգտել են խույս տալ նախորդ ընտրությունների խայտառակ պարտության կրկնությունից: Ներկա ընտրությունների առանձնահատկություններից կարելի է համարել նաեւ այն, որ հաղթողը նախօրոք հայտնի է, ուստի պայքարը ընթանում է ձայների քանակի շուրջ: Ասել է թե՝ պահպանողականներն ի սկզբանե իրենց քաղաքական ու տնտեսական հզոր լծակներն ու հնարավորությունն ի սպաս են դրել, որ Խաթամին կրկին ազգընտիր նախագահ չդառնա: Առաջադրված 8 աջ թեկնածուներն ընտրվել են այն սկզբունքով, որ յուրաքանչյուրին հաջողվի հասարակության որոշակի խավերից քվեներ ստանալ: Ենթադրվում է, որ ի շահ Խաթամիի քվեարկելու են գլխավորապես հասարակության միջին խավը, երիտասարդությունը, այդ թվում ուսանողության զգալի հատվածը: Վերջին շրջանում կատարված հարցումների համաձայն՝ շուրջ 43 միլիոն ընտրողների 70-72 տոկոսը մասնակցելու է ընտրություններին, որոնց 68 տոկոսը ընտրելու է, այլ կերպ՝ բացառված չէ, որ Խաթամին կրկին դառնա ազգընտիր նախագահ, թեեւ նախորդ ընտրությունների ոգեւորությունը բնավ էլ չի նկատվում:

Ավելացնենք, որ Խաթամին ձայների ինչպիսի հարաբերությամբ էլ ընտրվի, վարչակարգի շրջանակներում առկա՝ պահպանողական եւ բարենորոգչական ուժերի միջեւ պայքարը շարունակվելու է: Սակայն Խաթամին նախագահության երկրորդ ժամկետում իր նպատակները իրագործելու ավելի լայն հնարավորություններ ունի, քանզի այժմ գործ ունենալով բարեփոխիչ մեծամասնությամբ խորհրդարանի հետ, առաջին հերթին կառավարության կազմի հաստատման հարցում այլեւս դժվարություն չի ունենա:

ԷՄՄԱ ԲԵԳԻՋԱՆՅԱՆ

Բրյուսելում դատում են Ռուանդայի ցեղասպանության 4 ոճրագործների

Ականատեսներից մեկը՝ հայուհի

Բելգիայի մայրաքաղաքի երդվյալների դատարանում ապրիլի 18-ից մինչեւ հունիսի 8-ը ընթանում է մի բացառիկ դատավարություն, որտեղ դատում են օտարերկրյա ցեղասպանության ոճրագործների: Խոսքը 1994 թ. Ռուանդայում 800.000-1000.000 չափավորական թութսիների եւ հութուների բնաջնջմանը մասնակցած 4 անձանց մասին է: Առաջին անգամն է, որ ժողդատարանը զբաղվում է նման գործով: Ռուանդայի ազգային համալսարանի դասախոս Վենսան Նտեզիմանան եւ արդյունաբերող Ալֆոնս Հիգանիրոն մեղադրվում են կոտորածներ հրահրելու եւ անձամբ դրանց մասնակցելու մեջ, իսկ միանձնուհիներ Գերտրուդը եւ Մարի Կիզիտոն կասկածվում են վանքում ապաստանած հազարավոր թութսիների հութու մարդիկներին հանձնելու եւ նրանց ողջակիզմանն օժանդակելու մեջ: «Ֆրանս-Արմենի» ամսագիրը տեղեկացնում է, որ բելգիացի 12 երդվյալ դատավորները եւ 19 ատենակալներն ընտրվել են վիճակահանությամբ (նրանց մեջ կա մի հայուհի):

Դատավարությունը հնարավոր դարձավ Բելգիայում 1993 թ. ընդունված օրենքի հիման վրա, որը ժողդատարաններին իրավասություն է տալիս դատելու այլազգի ոճրագործներին՝ անկախ ոճրագործության վայրից: Չորս ռուանդացիների դատն այդ օրենքի առաջին կիրառությունն է: Բելգիայի արդարադատության մարմինները գործակցում են Ռուանդայի հարցերով զբաղվող միջազգային քրեական դատարանի հետ, որն առաջիկայում դատելու է 115.000 ամբաստանյալների:

Ռուանդացի 4 մեղադրյալները 1994 թվականից բնակվում են Բելգիայում, որտեղ ունեն հովանավորներ: Հարկ է նշել, որ ժամանակին բելգիացի կաթոլիկներից շատերը էր բերել ցեղասպանության պահին, անպատշաճ թողնելով բնակչությանը:

Դատավարությանը մասնակցում են 170 վկաներ, որոնցից 50-ը՝ Ռուանդայից: Զոհերի ընտանիքների փաստաբան երիկ Ժիյեն պնդում է, որ Ռուանդայում իրականացվել է ծրագրված ցեղասպանություն, քանի որ հութուների ղեկավարած պետությունն ուզում էր կանխել Արուշայի հաշտության համաձայնագրի կատարումը, որն իրեն պարտավորեցնում էր իշխանությունը կիսել թութսի փոքրամասնության հետ:

Ռուանդան համարել են իսկական քրիստոնեական երկիր: Բայց ցեղասպանության փաստերի բացահայտումից հետո հանրային կարծիքը բավական փոխվել է: 2000 թ. ապրիլին Բելգիայի վարչապետը Կիգալի մեկնեց եւ Ռուանդայի ժողովրդից ներողություն խնդրեց այն բանի համար, որ նախկին գաղութատեր Բելգիան (ՄԱԿ-ի հետ) իր «կապույտ սաղավարտներին» Ռուանդայից դուրս հանեցին դեռեւս ցեղասպանության սկզբում: Ռուանդան համարել են իսկական քրիստոնեական երկիր: Բայց ցեղասպանության փաստերի բացահայտումից հետո հանրային կարծիքը բավական փոխվել է: 2000 թ. ապրիլին Բելգիայի վարչապետը Կիգալի մեկնեց եւ Ռուանդայի ժողովրդից ներողություն խնդրեց այն բանի համար, որ նախկին գաղութատեր Բելգիան (ՄԱԿ-ի հետ) իր «կապույտ սաղավարտներին» Ռուանդայից դուրս հանեցին դեռեւս ցեղասպանության սկզբում:

Պ. Ք.

ՏԱՐԱԾԱՇՐՋԱՆ

Երեկ Յալթայում բացվեց ՎՈՒՈՒԱՄ-ի առաջին գագաթաժողովը

Հունիսի 6-7-ը Յալթայում տեղի է ունենում ՎՈՒՈՒԱՄ տարածաշրջանային դաշինքի անդամ պետությունների ղեկավարների առաջին գագաթաժողովը: Վրաստանի, Ուկրաինայի, Ուզբեկստանի, Ադրբեջանի եւ Մոլդովայի նախագահներ Շեւարդնաձեն, Կուչման, Քարիմովը, Ալիեւը եւ Վորոնինը ստորագրում են ազատ առեւտրի գոտու եւ տրանսպորտային միջանցքների (արեւելք-արեւմուտք) ձեւավորման խնդիրները: Յալթայի գագաթաժողովում դիտորդի կարգավիճակով ներկա է նաեւ Ռումինիայի պատգամավորական ներկայացուցիչը:

1997 թ. սեպտեմբերին ձեւավորված տարածաշրջանային այս ակումբը, որին 1999 թ. ՆԱՏՕ-ի վաշինգտոնյան գագաթաժողովի օրերին միացավ Ուզբեկստանը, ի սկզբանե նպատակ էր հետապնդում որպես հակակշռող ուժ հանդես գալ ընդդեմ Հավաքական անվտանգության պայմանագրի (ՀԱՊ): Դիտորդների կարծիքով՝ դեռեւս վերջնականապես չձեւավորված ՎՈՒՈՒԱՄ-ը կարող է փլուզվել, քանի որ նրա անդամ պետությունները վերջին շրջանում որդեգրել են Մոսկվայի հետ ռազմական, քաղաքական եւ տնտեսական կապերը վերականգնելու եւ ամրապնդելու քաղաքականություն: Մոլդովան, ի դեմս կոմունիստ նախագահ Վորոնինի, չի ցանկանում հակադրվել Մոսկվային եւ հանդես գալ Արեւմուտքի դիրքերից: Պրն Վորոնինը Մոսկվա կատարած իր այցի ընթացքում հայտարարեց, որ իր երկրին ՎՈՒՈՒԱՄ-ը պետք չէ», նախապատվություն տալով Մոլդովայի՝ «Ռուսաստան-Բելառուս» միությանն անդամակցությանը: Ուկրաինայի յուրաքանչյուր արեւմտամետ քայլին Ռուսաստանը պատասխանում է կոշտ տնտեսական քաղաքականությամբ, բացի այդ ժողովրդի շրջանում ժողովրդականություն չվայելող Կուչման այժմ առավել քան երբեւէ զգում է սլավոն մեծ եղբոր՝ Պուտինի օժանդակությունը:

Վերջին շրջանում Ադրբեջանը եւս կորցրել է իր նախկին հետաքրքրությունը. եթե երկու-երեք տարի առաջ Ալիեւը հույս էր փայփայում նաեւ ՎՈՒՈՒԱՄ-ի ստեղծվելիք «խաղաղարար գումարտակի» օգնությամբ վերջ դնել Ղարաբաղի հարցը, ապա այսօր ԼՂ հարցի լուծումը տեսնում է միայն Մոսկվայում: ՎՈՒՈՒԱՄ-ով խանդավառված չէ նաեւ Ուզբեկստանը: Նախագահ Քարիմովը վերջերս Մոսկվայում բանակցելով Պուտինի հետ, սկսել է արտաքին քաղաքականության ռուսամետ ակնարկներ անել: Ամենադժվար կացության մեջ, թերեւս, հայտնվել է Վրաստանը: Մի կողմից Շեւարդնաձեն ստիպված է կատարել Արեւմուտքի առջեւ իր ստանձնած պարտավորությունները՝ հակադրվելով Ռուսաստանին, մյուս կողմից հակադրվելով Ռուսաստանին՝ հակադրվում է իր երկրի ժողովրդի կամքին, որը նախընտրելի է համարում «հավերժ Ռուսաստանի հետ» կարգախոսը: Ռուսաստանից Վրաստանի տնտեսական եւ ռազմական կախումն այնքան մեծ է, որ Մոսկվան Շեւարդնաձեի արեւմտամետ քայլերին պատասխանում է համապատասխան քաղաքական (այցագրային կարգի հաստատում) եւ տնտեսական (գազի մատակարարումների դադարեցում) ճնշումներով: Ինչեւէ, Շեւարդնաձեն ՎՈՒՈՒԱՄ-ը շարունակում է համարել «միջազգային հետաքրքիր եւ օգտակար կազմակերպություն»: Ճիշտ է, Վրաստանի նախագահն այլեւս Մոսկվային չի «պառնում» ՆԱՏՕ-ին մինչեւ 2005 թ. անդամակցելու քայլով:

Ռ. Տ.

Ո՞վ է ղեկավարում Ադրբեջանը, երբ Հ. Ալիեւը հանրապետությունում չէ

Երեկ այսպիսի վերնագրով նյութ է տպագրել Բաքվի «Էխո» թերթը: Թղթակցի այս հարցին պատասխանել է Հ. Ալիեւի աշխատակազմի մի անանուն աղբյուր. «Չնայած ըստ սահմանադրության հանրապետության երկրորդ դեմքը Մեջլիսի խոսնակն է, Մուրթուզ Ալեսքերովն Ալիեւի բացակայելու օրերին չի ղեկավարում երկիրը: Նախագահի պաշտոնավարության ութ տարիներին Հ. Ալիեւը երբեւէ պաշտոնապես իր պարտականությունները որեւէ պաշտոնյայի չի հանձնել: Գտնվելով Ադրբեջանից դուրս, Ալիեւն օրական երկու անգամ՝ առավոտյան եւ երեկոյան հեռախոսազրույց է ունենում իր աշխատակազմի ղեկավար Ռամիզ Մեհդիեւի, վարչապետ Արթուր Ռասիզադեի, իր որդի Իլհամի, ՆԳ, պաշտպանության եւ ԱԱ նախարարների հետ»:

Ի դեպ, ավելացնենք, որ հենց Իլհամ Ալիեւի եւ Ռամիզ Մեհդիեւի անուններն են նշվում որպես Հեյդար Ալիեւի իշխանության հավանական ժառանգորդների:

ԿՀՎ-ի տնօրենը ժամանում է Մերձավոր Արեւելք

Հունիսի 5-ին ԱՄՆ վարչակազմը որոշեց Մերձավոր Արեւելք գործուղել ԿՀՎ-ի (CIA) տնօրեն Ջորջ Թենեթին՝ այնտեղ ստեղծված պայթյունավտանգ եւ գերլարված իրադրությունը կարգավորելու համար: Նախագահ Ջորջ Բուշն այս քայլը բացատրեց նրանով, որ «պաղեստինցիների եւ իսրայելցիների միջեւ ծեռք է բերվել առաջընթաց»: Ավելին՝ Բուշը հավաստիացրել է, թե «կարելի է վերսկսել քաղաքական բանակցություններն այն ժամանակ, երբ հաստատվի հրադադարը եւ կատեգվի բռնությունը»: Հասկանալի է, որ ԱՄՆ-ի նախագահի «լավատեսությունը» հիմնված է պաղեստինյան առաջնորդ Յասեր Արաֆաթի հունիսի 2-ի հայտարարության վրա, ըստ որի նա անհապաղ եւ առանց նախապայմանների հրադադարի կոչ էր արել: Բայց եւ այնպես, Արաֆաթի այդ հորդորն, իր հերթին, հնչեց մի քանի ժամ անց Թել Ավիվում տեղի ունեցած անձնասպան գործողությունից, որի հետեւանքով սպանվեցին 20 եւ վիրավորվեցին 120 իսրայելցիներ: Ընդ որում, այս միջադեպին հաջորդել էին իսրայելական վարչակազմի սպառնալիքները՝ պաղեստինյան իշխանության եւ տարածքների դեմ լայնածավալ հարձակում սկսելու վերաբերյալ: Եվ քանի որ այդ սպառնալիքների իրականացումը հղի էր աղետալի հետեւանքներով տարածաշրջանի, ուստիեւ այնտեղ առկա ամերիկյան շահերի համար, Վաշինգտոնը որոշեց գործուն միջամտություն ցուցաբերել առաջացած ճգնաժամը հաղթահարելու համար: Այլ կերպ՝ Վաշինգտոնը միջամտում է այն ժամանակ, երբ լուրջ վտանգ է սպառնում ամերիկա-իսրայելական շահերին տարածաշրջանում: Ի դեպ, Բուշի վարչակազմը ի սկզբանե շահագրգիռ կողմերին հորդորում էր հնարավորություն տալ Իսրայելի ծայրահեղական վարչապետ Արիել Շարոնին՝ պաղեստինցիների հետ խաղաղ կարգավորումը սկսելու համար: Իսկ իրականում Վաշինգտոնը հույս ուներ, թե Շարոնը կկարողանա ճնշել պաղեստինյան ապստամբությունը, ինչը չիրականացավ:

Ա. Ս.

Երբ սերն առ հայրենիք գործ է դառնում

Նկարչական գլուխգործոցներ Հայաստանին

Հայաստանի ազգային պատկերասրահում երեկ բացվեց մի հետաքրքիր ցուցահանդես, որտեղ ներկայացված են Մախոխյանի, Սարյանի, Կալենցի, Մինասի, Ժերանյանի, Զորյանի, Սամսոնյանի, Պետիկյանի, Գառզուի, Ժանսեմի, Ասատուրի, ճանաչված հրաշալի նկարիչների ստեղծագործությունները: Ցուցադրության համար կախված էին Գ. Անթոյանի, Ա. Գարինյանի, Է. Յաղջյանի, Ղեմոնի եւ ամերիկահայ նշանավոր քանդակագործ-նկարիչ Ռուբեն Նաֆյանի գործերը, արվեստագետներ, որոնց աշխատանքներից ոչ մեկը պատկերասրահը դեռեւս չուներ: 42 գործ էր ներկայացված, գործեր, որոնց արժեքն անգնահատելի է: Ու այս ամենը նվիրատվություն է:

Ամերիկայում ադրած եւ իրենց մահկանացուն կնքած Հայկ եւ Ալիս Ասատուրյանները 1960-70-ական թվականներին իրենց դստեր՝ փոքրիկ Սեդայի հետ այցելում էին հայրենիք: Բնավորությամբ մեղմ, համեստ, բարեհամբույր այս անձինք սիրում էին արվեստը եւ սեփական հավաքածու ստեղծում, թեեւ իրենց միջոցները այնքան էլ լայն չէին:

Մենք խոսում ենք հաճախ սփյուռք-հայրենիք կապերի մասին եւ միշտ փնտրում ենք մեր կամուրջներն ավելի ամրացնող կապեր, բայց չգիտես ինչու միշտ չեն արդարանում այն ցանկությունները, որոնք այնքան անհրաժեշտ են հենց այդ կամուրջների ամրացման համար: Անշուշտ, զանազան պատճառներ կան: Եվ այս անգամ, այս ցուցահանդեսի առիթով պետք է իսկապես հպարտությամբ ու հուզմունքով խոսել: Նախ, որ զգալի թիվ են կազմում նվիրատվության ցանկում եղած աշխատանքները: Բացի Ազգային պատկերասրահին նվիրած այս 42 գործից, եւս 55 աշխատանք նվիրվել է Մայր աթոռ Ս. Էջմիածնի Գանձատանը: Երկրորդը. Հայաստանում այսուհետ կլինեն նոր արվեստագետների գործեր, որոնց շարքում հատկապես արժանահիշատակ են ամերիկյան քանդակագործության եւ նկարչության ոլորտում մեծ հեղինակություն վայելող Ռուբեն Նաֆյանի գործերը:

Եվ ահա, երբ այսօր Հայկ եւ Ալիս Ասատուրյանների դուստրը՝ Սեդան, Հայ օգնության ֆոնդի (ՀՕՖ) միջոցով ի կատար է ածում իր ծնողների իղձը, նաեւ իր ցանկությունը գումարելով, եւ այսպիսի մի հարուստ հավաքածո է նվիրում Հայաստանին, արդե արժե հիշել, որ այս լուսապայծառ մարդկանց հետ Հայաստանում առաջինը ծանոթացել եւ նրանց հայ նկարչության մեծերի հետ է ծանոթացրել արվեստաբան Շահեն Խաչատրյանը՝ Ազգային պատկերասրահի այսօրվա տնօրենը: Մարտիրոս Սարյանի, Հարություն Կալենցի, Մինասի, Հովհաննես Ասատրյանի հետ ծանոթությունները շատ ավելի բուռն է դարձնում սերը հայ գեղանկարչության նկատմամբ: Եվ ամուսիններն իրենց համեստ գումարներով նկարներ էին գնում, իրենց տանը՝ Նյու Յորքում, հայոց ոգին, հայոց գույնը պահելու համար: Հայկ Ասատուրյանը, ծննդով լինելով Իրանից, սերտ կապեր ուներ իրանահայ նկարիչներ Եսայի Շահիջանյանի, Երվանդ Նահապետյանի, Ղեմոնի, Ղեւի հետ եւ ուներ նրանց գործերից 7-8 տարի առաջ, ցավոք, Ասատուրյան ամուսինները մահացան, եւ նրանց անչափ արժեքավոր հավաքածոն կարող էր գրիվ գալ աշխարհով մեկ, եթե չլիներ այս պայծառ մարդկանց հայրենասիրությունը: Մոտ 100 գեղանկարչական աշխատանք, որն ամենահամեստ հաշվումներով կարող է վաճառվել 400 հազար դոլարից ավելի գնով, այժմ գտնվում է Հայաստանում:

Հայկ Ասատուրյան

Ալիս Ասատուրյան

Ռուբեն Նաֆյան. «Բնորդուհի»

– Ես առանձնապես ուզում եմ շեշտել Ասատուրյանների դստեր՝ Սեդայի դերը, մեր զրույցի ժամանակ ասաց պատկերասրահի տնօրեն Շահեն Խաչատրյանը: Ծնողների մահից հետո, տնտեսական բավականին ծանր վիճակի մեջ լինելով (կորցրել էր ամուսնուն եւ երեխաների հոգսն իր ուսերին էր մնացել), Սեդան կարող էր մեկ-երկու նկար վաճառել եւ ինքն իրեն ապահովել: Բայց ծնողներից ստացած բոլոր նկարները նա ուղարկել է Հայաստան:

Մարտիրոս Սարյան. «Գառնիի ձորը» (էսքիզ, 1963 թ.) եւ «Նկարչի տունը» (1959 թ.), Մինաս. «Փիլիսոփան» (1960 թ.) եւ «Խնոցի» (1965 թ.), Հարություն Կալենց «Ծաղիկներ» (՞), Վարդան Մովսիսյան. «Ջրաղացը ձմռանը» (1901 թ.), «Նավը ծովում» (՞), Գառզու. «Փարիզ» (1965 թ.), Ժանսեմ. «Լողացող կինը» (1960 թ.), «Որբ տղան» (1947-1948 թթ.) եւ «Ծաղրածուն» (1960 թ.), Ռուբեն Նաֆյան. «Բնորդուհի» (՞), Հովհաննես Ասատրյան, Ռիշար Ժերանյան... 40-ից ավելի աշխատանքներ ներկայացվել է արվեստագետների եւ արվեստաբաններ դասին: Մեկ ամիս հետո էջմիածնում բացվելու է Հայկ եւ Ալիս Ասատուրյանների նվիրատվության մյուս մասը (55 աշխատանք): Մենք այդ ժամանակ արդեն հնարավորություն կունենանք ամբողջությամբ գնահատել այս իսկապես բարձրաժեք նվիրատվությունը:

ՄԵՐԳԵՑ ՄԵԼՔՈՆՅԱՆ

Սպորտային պարերի աշխարհի բաց առաջնություն

Անցած շաբաթ «Դինամո» մարզասրահում կայացավ մարզական պարերի աշխարհի բաց առաջնությունը: Նույն օրերին, օրվա առաջին կեսին կայացավ Հայաստանի փակ առաջնությունը: Երեւան էին ժամանել մրցավարներ եւ պարային զույգեր Իտալիայից, Շվեյցարիայից, Լիբանանից, Լեհաստանից, Սլովակիայից, Ուկրաինայից, Ռուսաստանից եւ Կիրգիզստանից: Մրցույթին մասնակցելու հայտ էին ներկայացրել 34 զույգ՝ լատինաամերիկյան եւ 25 զույգ՝ եվրոպական պարաձեւերից, որոնցից հաղթող ճանաչվեցին յուրաքանչյուր պարաձեւից 6 զույգ: Առաջնությունն ընթանում էր լարված ու տեւում էր մինչեւ կեսգիշեր: Սպորտային պարերի աշխարհի բաց առաջնությունում եվրոպական պարաձեւերից առաջին տեղը գրավեցին Դմիտրի Վլոխ-Օլգա Ուրումովա զույգը (Ուկրաինա), երկրորդը՝ Դենիս Կուսեպով-Մարինա Վասիլեւա զույգը (Ռուսաստան), երրորդը՝ Մարտին Վուչ-Քրիստինա Խորվաթովա զույգը (Սլովակիա), մեր՝ Գեորգի Բաբայան-Վարդուհի Ալեքսանյան զույգը («Մասադոր», մարզիչ՝ Գեւորգ Մարկոսյան) 6-րդ տեղում է: Լատինաամերիկյան պարաձեւից առաջին տեղը բաժին ընկավ Ուկրաինայի զույգին՝ Դմիտրի Վլոխ-Օլգա Ուրումովա, երկրորդը Հայաստանի զույգն էր՝ Գեորգի Բաբայան-Վարդուհի Ալեքսանյան, 5-րդ տեղում կրկին Հայաստանի ներկայացուցիչներ էին՝ Գարիկ Գամազյան-Աննա Մովսիսյան զույգը (մարզիչ՝ Գեւորգ Մարկոսյան), 6-րդը՝ կրկին Ռուսաստանի զույգն էր:

ՄԱՐԻԵՏԱ ՄԱՍԿԱՐՅԱՆ

ՀՅՈՒՐԱԽՍԱՊԵՐ

ՀՖՆ-ի համերգը Մոսկվայում

Մոսկվայից վերադարձավ Հայաստանի Ֆիլհարմոնիկ սիմֆոնիկ նվագախումբը: Կոնսերվատորիայի համերգային մեծ դահլիճում, որը եվրոպայի լավագույն սրահներից մեկն է թե՛ իր ճարտարապետական-ակուստիկ նկարագրով, թե՛ բանիմաց ու խստապահանջ ունկնդրով, ՀՖՆ-ի համերգն անցավ բացառիկ հաջողությամբ: Ելույթը նվիրված էր Հայաստանում քրիստոնեությունը պետական կրոն ընդունման 1700-ամյակին եւ ընդգրկված էր այդ հիշարժան տարելիցին նվիրված միջոցառումների ծիրում:

Համերգին ներկա էին նաեւ պատգամավոր եւ հոգեւոր բարձր անձինք, որոնք իրենց գնահատանքի խոսքը հղեցին հայ երաժիշտներին:

Հայ առաքելական եկեղեցու Նոր Նախիջեւանի եւ Ռուսաստանի թեմի առաջնորդ եպրաս արք. Ներսիսյանը մասնավորապես նշեց. «Ոգեւորիչ է, տոնական է, եւ այս բոլորը ցնծություն է, որ Ռուսիո մայրաքաղաք Մոսկվայի մեջ, մեր հայորդիների մասնակցությամբ Հայաստանի ֆիլհարմոնիկ նվագախմբով տոնախմբվում է 1700-ամյակը՝ մեր հավատի, մեր քրիստոնեական հավատի, մեր կենարար հավատի, մեր ստեղծարար հավատի մեր հաղթական եւ փրկարար հավատի եւ մեզ միավորող հավատի, որը գալիս է ասելու՝ ապրեք հավատով. հավատը դա մեր կյանքն է, եւ այդ կյանքը դա ստեղծագործություն է, արարում է բարի գործերի, անանձ, հավիտենական արժեքների, որոնցով պետք է հարստացնենք մեր ազգային գանձարանը եւ դրանով մասնակիցը լինենք մարդկության արժեքների հարստացմանը»:

Հայ եւ ռուս երաժշտաբեր մտավորականների թվում համերգն ունկնդրեցին նաեւ հայաստանցի (այժմ՝ մոսկվաբնակ) անվանի երաժիշտներ: Ամփոփելով մասնագետների կարծիքները, երեւանի եւ Մոսկվայի պետական կոնսերվատորիաների պրոֆեսոր, ջութակահար Արա Բոգդանյանն ասաց. «Այսօր ներկա գտնվելով Ֆիլհարմոնիկ նվագախմբի համերգին, ես մեծ հուզմունք եմ ապրում, քանի որ վերջին մի քանի տարվա ընթացքում մենք բոլորս հնարավորություն չունեինք լսելու այս նվագախմբին: Պետք է ասել, որ նվագախմբի կատարողական մակարդակը շատ բարձրացել է: Թոփչյանին ես ճանաչում եմ արդեն երեւի 10 տարի, քանի որ նա սովորում էր իմ դասարանում՝ Երեւանի կոնսերվատորիայում: Դեռեւս այն տարիներին նա շատ նպատակասլաց, օժտված երիտասարդ էր: Շատ մեծ տպավորություն թողեց իմ վրա թե նվագախումբը, թե դիրիժորը եւ թե մենակատար Սիբիլլե Չոփը: Այս երեկո մենք ականատես եղանք իրական բարձր արվեստի մի շքերթի, որն իրականացրին հայ երաժիշտները»:

ՀՖՆ-ի մոսկովյան ծրագրում ընդգրկված էին Պ. Չայկովսկու «Փոքրիկը», Հ. Բեռլիոզի «Ֆանտաստիկ սիմֆոնիան» ու Ա. Խաչատրյանի ջութակի եւ նվագախմբի կոնցերտը (մենակատար՝ Սիբիլլե Չոփ.): Ինչպես նշեց Արամ Խաչատրյանի որդին՝ Կարեն Խաչատրյանը, ՀՖՆ-ի ելույթն իրապես մշակութային իրադարձություն էր Մոսկվայի համար: Նվագախումբը հնչում էր վառ, հյութեղ երանգավորմամբ, իսկ երիտասարդ դիրիժոր Էդուարդ Թոփչյանը հաստատեց իր նվագավարական տաղանդը:

Ամփոփելով միջոցառումը, Ռուսաստանի Դաշնությունում ՀՀ դեսպան Սուրեն Սահակյանն ասաց. «Ես հպարտ եմ, որ այսօր Ռուսաստանի մայրաքաղաք Մոսկվայի այս առաջնակարգ բեմում մենք կարող ենք ցուցադրել մեր հայ կատարողական արվեստը: Գերազանց նվագախումբ, հրաշալի կատարումներ: Եվ ուրախալի է այս մեծ գործի ղեկին տեսնել տաղանդավոր երաժիշտ Էդուարդ Թոփչյանին»:

ԹԱՄԱՐ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

Մանուշակի պես ապրեց

Կյանքից հեռացավ Ջուլիետ Մաշինյանը

Նստում էր ավազների ու խոտերի մեջ, կեսօրին խայտում էր, եւ եթե կուզ էր՝ ավելորդ չէր ուզում: Համեստ բնավորություն ուներ: Մոտավորապես գիտեր իր ով լինելը: Ջուլիետ Մաշինյանի ձուկը: Ինքը՝ Ջուլիետ Մաշինյանը: Չէր մոռանում ոչինչ, բայց հիշաչար չէր: Բարին էր միայն հիշում ու բարի մարդկանց (նաեւ՝ չարերի) բարությունը: Ուրախություն տեղ հասցնելիս միշտ էլ մի օր, մի շաբաթ, մի ամիս շուտ էր գնում: Այսպես անհամբեր էր: Մոռանում էր իր նկատմամբ գործած բոլոր չարությունները, քանզի գիտեր խոսքի թերարժեքությունը:

Այսպես ապրում էր աշխարհում իր հրաշալի հեքիաթները պատմելով, ամենաաղտուկն ու ծանծրալին դարձնելով հեքիաթ: Չէր կարող այլ կերպ լինել, քանզի ոգու մարդ էր: Ու եթե հիմա այս աշխարհում, այս քաղաքում չէ, ապա մեզ հետ են իր «Գլոբուսն ու տղան», «Մորենին», «Ոսկե ճանճը», «Ծիրանի մանուշակները»: Ու իր դարակների վրա բազում-բազմաթիվ գրքեր՝ դեռեւս չհրատարակված:

Ապրեց արվեստագետին հատուկ՝ հախուռն ու անհիշաչար: Շարունակելու է ապրել, որովհետեւ գրող մարդը չի մեռնում: Մնում է, եթե անգամ նրա սիրտն է պայթել կամ շունչը կտրվել: Ապրեց մանուշակի նման. շատերը չտեսան իրեն, բայց դրանից բնավ չպակասեց Ջուլիետ Մաշինյան մարդու եւ գրողի արժեքը:

ՄԵՐԳԵՑ ԳԱԼՈՅԱՆ

Նրա հոգին կմնա այստեղ

Սոնա Գարամանյանի աշխատանքների ցուցահանդեսը

Երեկ՝ հունիսի 6-ին, ժողովրդական արվեստի պետական թանգարանում բացվեց ձեռագործ աշխատանքների վարպետ, ավստրալահայուհի Սոնա Գարամանյանի անհատական ցուցահանդեսը:

Հանդիսավոր բացման արարողությանը շնորհավորանքի եւ շնորհակալական խոսք ասաց ժողովրդական արվեստի թանգարանի տնօրեն Սարո Սարուխանյանը: Շնորհակալական, որովհետեւ օրիորդ Գարամանյանը ցուցադրված աշխատանքները նվիրում է թանգարանին: Սա արվեստագետի երկրորդ նվիրատվությունն էր:

Ցուցահանդեսում ներկայացված էին հեղինակի 87 աշխատանքներ, այդ թվում նկարահիպ, գոբելենահիպ ստեղծագործություններ, սեղանի ծածկոցներ, ձեռագործված տաբատ, ասեղնագործած բաճկոններ, մկրատի եւ ակնոցի պահանոցներ:

Աշխատանքները պատկերում էին Հայաստան աշխարհը: Շատ հետաքրքրական էին ներկայացված տարվա եղանակները: Սոնա Գարամանյանն անդրադարձել էր նաեւ հայոց պատմությանը, ստեղծելով «Մեծն Տիգրան» եւ «Հայուհին բարձր Հայքից» աշխատանքները: Հեղինակը քրիստոնեության պետական կրոն ճանաչման 1700-ամյակին էր նվիրել «Քրիստոնյա Հայաստան», «Սուրբ ծնունդ», «Գրիգոր Լուսավորիչ», «Թադեոս եւ Բարդողիմեոս» ստեղծագործությունները:

ՀԳԱԱ արվեստի ինստիտուտի ժողովրդական արվեստի բաժնի ավագ գիտաշխատող Զավեն Թագակյանը նշեց, որ «Սոնան կանգառ չունի ոչ մի տեսանկյունից: Նա փնտրում եւ գտնում է տեխնիկական նոր հնարներ, ձգտում է լայնացնել իր ստեղծագործության շրջանակները»:

ԷԼԵՆ ՄՈՒՐԱԴՅԱՆ

ՇԱԽՄԱՏ

Սմբատ Լոլուչյանի գերազանց խաղը

Գագիկ Հովհաննիսյանը հաղորդում է Մակեդոնիայից

Սմբատ Լոլուչյանը գերազանց ոճով հաղթեց թուրք գրոսմայստեր Աթալիկին (նա այժմ բնակվում է Բոսնիա-Հերցեգովինայում) եւ ամրագրվեց աղյուսակի ամենավերին մասում: Սա մեզ համար ամենահաճելի արդյունքն էր Եվրոպայի առաջնության 5-րդ տուրում: Այժմ Լոլուչյանը աղյուսակում, շախմատիստների լեզվով ասած, ունի «պլյուս երեք» (հաղթանակների եւ պարտությունների տարբերությունը): Դեռ մինչեւ մեկնարկը փորձված մասնակիցները եւ մեկնաբաններն արագորեն հաշվարկեցին, որ «պլյուս երեքը» անվիճելիորեն աշխարհի առաջնության ուղեգիր կտա, իսկ «պլյուս երկուսի» դեպքում հարկ կլինի մասնակցել լրացուցիչ մրցախաղերի: Այնպես որ, տեսականորեն Սմբատն այժմ կարող է բոլոր մնացած հանդիպումներն ավարտել անարյուն ոչ-ոքիներով եւ, հիմնական խնդիրը կատարած, տուն վերադառնալ: Բայց գործնականում պատկերն, իհարկե, այլ է: Նախ դեռ մինչեւ մրցաշարի ավարտը 8 տուր կա, եւ շատ բան կարող է փոխվել, բացի այդ, Լոլուչյանն իր մարտական խառնվածքով գոնե մինչեւ եզրագիծն, անկասկած, կծգտի հագեցված ու հետաքրքիր պայքարի:

Այս տուրում հայ շախմատիստներից շատերն ուրախացրին մեզ: Կարեն Ասրյանը, Արտաշես Մինասյանը, Արսեն Եղիազարյանը սերտով տպավորիչ հաղթանակներ տարան: Ասրյանը պարտության մատնեց գրոսմայստեր Առլանդիին (Իտալիա), Մինասյանը՝ բուլղարացի Պետրովին, Եղիազարյանը՝ Իտալիան ներկայացնող մեկ այլ գրոսմայստերի՝ Զլոչեւսկուն: Անկասկած, գովասանքի է արժանի նաեւ Գաբրիել Սարգսյանը, որը, նույնպես սերտով, ոչ-ոքի խաղաց հոլանդացի նշանավոր գրոսմայստեր Պիկեսի հետ:

Հաշտություն կնքեցին նաեւ վիճակահանության քմահաճույքով միմյանց հետ մրցող Լեւոն Արոնյանն ու Վլադիմիր Հակոբյանը: Բայց դա կարծես «գրոսմայստերական» ոչ-ոքի չէր: Անգամ հանդարտ դիրքում մրցակիցները կոմբինացիոն հարվածներով սրեցին իրավիճակը, բայց պարզվեց, որ Արոնյանի նավակն ու Հակոբյանի փիղն ու երկու զինվորը լիովին հավասարակշռում են միմյանց: Սերգեյ Մովսիսյանը, որը Հակոբյանի նման առայժմ հանդարտ մրցաշարային տակտիկա է ընտրել, հաշտություն կնքեց ռումինացի գրոսմայստեր Իսրաելեսկուի հետ: Մոտ էր հաջողությանը Արա Մինասյանը, բայց նրա մրցակից ուկրաինացի գրոսմայստեր Մոիսեենկոն կարողացավ փրկել կես միավոր:

Գեղեցիկ եւ կարեւոր հաղթանակ կարող էր տանել Ռաֆայել Վահանյանը, որը զինվորի նուրբ զոհաբերությամբ դժվարագույն խնդիրներ էր դրել գերմանացի գրոսմայստեր Լյութերի առջեւ: Բայց մեկ անզգույշ քայլը փոխեց իրավիճակը, եւ Վահանյանը, անցնելով պաշտպանության, խաղն ավարտեց ոչ-ոքի: Առավել եւս ցավալի կորուստ ունեցավ Աշոտ Անաստասյանը: Նա սեւերով վստահորեն առնվազն հավասարեցրել էր դիրքը հոլանդացի հռչակավոր գրոսմայստեր վան Վելիի հետ պարտիայում, երբ կոպիտ վրիպում թույլ տվեց եւ միանգամից անծնաստուր եղավ: Վան Վելիի բախտն արտակարգ բերում է հայ շախմատիստների հետ հանդիպումներում: Նախորդ օրը Արտաշես Մինասյանը նրան պարտվել էր միանգամայն շահած դիրքում...

Ահա վեցերորդ տուրի մեզ առավել հետաքրքրող զույգերը. Դելչեւ (Բուլղարիա)-Լոլուչյան, Գրինֆելդ (Իսրայել)-Վահանյան, Ասրյան-Տկաչեւ (Ֆրանսիա), Նաստֆ (Ֆրանսիա)-Մովսիսյան, Հակոբյան-Վայսեր (Ֆրանսիա), Անաստասյան-Չաթալբաշեւ (Բուլղարիա), Արտ. Մինասյան-Բոլոգան (Մոլդովա), Ֆյոդորով (Բելառուս)-Արոնյան, Եղիազարյան-Պոդգայեց (Ուկրաինա), Սարգսյան-Բակլան (Ուկրաինա), Մայլս-Արա Մինասյան:

Վերջում նկատենք, որ եթե առավել նշանավոր մասնակիցներից Պոլգարը հիմնականում ցպեց իրավիճակը (3,5 միավոր), ապա Շորսը, Գուրեւիչը, Գեորգիեւը, Ազմայփարաշվիլին ունեն միայն 2,5-ական, իսկ Կորչնոյը ընդամենը 1,5 միավոր:

Հինգ տուրից հետո

1-2. Կ. Ասեեւ (Ռուսաստան)	4,5
Գ. Տիմոշենկո (Ուկրաինա)	4,5
3-10. Ս. Լոլուչյան (Հայաստան)	4
11-40. Ռ. Վահանյան (Հայաստան)	3,5
Կ. Ասրյան (Հայաստան)	3,5
41-85. Ս. Մովսիսյան (Չեխիա)	3
Վ. Հակոբյան (Հայաստան)	3
Ա. Անաստասյան (Հայաստան)	3
Արտ. Մինասյան (Հայաստան)	3
Լ. Արոնյան (Հայաստան)	3
86-130. Ա. Եղիազարյան (Հայաստան)	2,5
131-165. Արա Մինասյան (Հայաստան)	2

Եվ կրկին՝ Գարրի Կասպարովը

Ավարտվեց Աստանայում անցկացված 20-րդ կարգի մրցաշարը: Ղազախստանի մայրաքաղաքում հանդես էին գալիս 6 գրոսմայստերներ, որոնք պայքարում էին երկու շրջանով:

Հիանալի հանդես եկավ աշխարհի 13-րդ չեմպիոն Գարրի Կասպարովը: Նա 4 հաղթանակ տարավ, 6 հանդիպում ավարտեց ոչ-ոքի եւ 7 միավորով գրավեց առաջին տեղը: Բայց ընդհանուր հաղթանակից բացի կարեւոր էր նաեւ, որ Կասպարովը վերջին տուրում պարտության մատնեց շախմատային գահի վրա իրեն փոխարինած Վլադիմիր Կրամնիկին ու առաջ անցավ նրանից: Վերջինս մրցաշարում գրավեց երկրորդ տեղը՝ միայն կես միավորով ետ մնալով հիմնական ախոյանից:

Մրցաշարի մյուս մասնակիցները խաղացին մոտավորապես իրենց ուժին եւ վարկանիշներին համապատասխան:

Ներկայացնենք Աստանայի մրցաշարի վերջնական արդյունքները. 1. Գարրի Կասպարով (Ռուսաստան)՝ 10 հնարավորից 7 միավոր, 2. Վլադիմիր Կրամնիկ (Ռուսաստան)՝ 6,5, 3. Բորիս Գելֆանդ (Իսրայել)՝ 5,5, 4-5. Ալեքսանդր Մորոզեւիչ (Ռուսաստան), Ալեքսեյ Շիրով (Իսպանիա)՝ 4,5-ական, 6. Դարմեն Սադվակասով (Ղազախստան)՝ 2 միավոր:

ՖՈՒՏԲՈԼ

Խաղադաշտում ֆուտբոլային լեգենդներն էին

Հայաստանի եւ Լեհաստանի ազգային հավաքականների խաղին նախորդեց այս երկրների վետերանների ընկերական հանդիպումը: «Հանրապետական» մարզադաշտում հավաքված մարզասերներն ականատես եղան 70-80-ականների լեգենդար ֆուտբոլիստների խաղին: Հայաստանի հավաքականի հիմքը կազմում էր «Արարատ-73»-ի ոսկե կազմը, Լեհաստանինը՝ աշխարհի առաջնությունում բարձր տեղեր գրաված ֆուտբոլիստները: Կարծում ենք, որ ավելորդ չէ թվարկել խաղադաշտում հանդես եկած ֆուտբոլիստներին. **Հայաստան՝** Այոշա Աբրահամյան, Սուրեն Մարտիրոսյան, Ալբերտ Սարգսյան, Ալեքսանդր Կովալենկո, Նորայր Մեսրոպյան, Պողոս Գալստյան, Գագիկ Հովհաննիսյան, Սարգիս Պողոսյան, Էդուարդ Մարգարով, Հովհաննես Զանազանյան, Նիկոլայ Ղազարյան, Սամվել Ավետիսյան, Ալեքսանդր Քերոբյան, Արթուր Միրզոյան, Պողոս Գալստյան, Սամվել Պողոսյան, Արսյուշա Մովսիսյան, **Լեհաստան՝** Յան Տոմաշեւսկի, Անտոնի Շիմանովսկի, Միրոսլավ Բուլզացկի, Ստեֆան Մաեւսկի, Վլադիսլավ Ժմուդա, Զդիսլավ Կաոկա, Գժեգոժ Լյատո, Լեսլավ Շմիկեւիչ, Հենրիկ Միլոշեւիչ, Վլոդիմեժ Լյուբանսկի, Յանուշ Կուոցեւիչ, Պյոտր Մովլիկ, Մարեկ Կուստո, Կաժիմեժ Կմեցիկ, Յան Դոմարսկի, Միրոսլավ Օկոնսկի, Զդիսլավ Կրենտինա, Օլավ Լյուբոշեւսկի, Դարիուշ Չեկանովսկի, Զբիգնեւ Բոնեկ: Մեր թիմի մարզիչներն էին Նիկիտա Սիմոնյանը, Սեմյոն Իսրայելյանը եւ Հովհաննես Զանազանյանը, հյուրերինը՝ Լեսլավ Շմիկեւիչը:

Նիկիտա Սիմոնյանին հուշամեդալ է հանձնում Երեւանի քաղաքապետ Ռոբերտ Նազարյանը

Պահ Հայաստանի եւ Լեհաստանի վետերանների հավաքականների խաղից

Խաղադաշտում հետաքրքիր պայքար ծավալվեց, որտեղ վետերան ֆուտբոլիստները ցույց տվեցին, որ շաս որակներ դեռ պահպանել են: 11-րդ րոպեին տուգանային հարվածով հաշիվը բացեց Զանազանյանը: Բայց շուտով Բոնեկն ու Լյուբանսկին առաջ մղեցին հյուրերին: Այնուամենայնիվ, թիմերը հանգստի գնացին, երբ հաշիվը 3-2 էր՝ հօգուտ Հայաստանի հավաքականի: Մեր թիմերից գոլերը խփեցին Գալստյանն ու Հարությունյանը: Երկրորդ խաղակեսը եւս լարված ընթացավ: Միջնամասում Սարգսյանը հաշիվը դարձրեց 4-2, բայց խաղավերջում Չեկանովսկին, 2 անգամ գրավելով դաշտի տերերի դարպասը, ոչ-ոքի պարգեւեց Լեհաստանի հավաքականին: Մարտական խաղ, խաղաղ արդյունք՝ 4-4:

Խաղի ընթացքում ժամանակ առ ժամանակ հայերեն, լեհերեն ու ռուսերեն լեզուներով, հումորով լեցուն մեկնաբանություններ էին անում մեր Սուրեն Բաղդասարյանն ու լեհ Ադամ Կոլկովիչը: Հանդիպման վերջում թիմերի լավագույն ֆուտբոլիստներին մրցանակներ հանձնեց «Եվրասպորտը»: Պարգեւատրվեցին Հովհաննես Զանազանյանն ու Գժեգոժ Լյատոն:

Այս հանդիպման ընդմիջման րոպեներին տեղի ունեցավ հանրահայտ ֆուտբոլիստ ու մարզիչ Նիկիտա Սիմոնյանի մեծարման արարողությունը: Օլիմպիական խաղերի, Եվրոպայի չեմպիոնի, ԽՍՀՄ-ի բազմակի չեմպիոնի, մեծ մարզչի 75-ամյակը լրանում է այս տարի եւ, օգտվելով առիթից, հոբելյանը նշվեց մեզանում: Սիմոնյանին շնորհավորեցին Հայաստանի ու Լեհաստանի վետերան ֆուտբոլիստները, ազգային ֆեդերացիաների նախագահներ Սուրեն Աբրահամյանն ու Միխալ Լիսկեւիչը: Երեւանի քաղաքապետ Ռոբերտ Նազարյանը հուշամեդալ հանձնեց նրան: Հոբելյարը նվերներ ու ծաղիկներ ստացավ տարբեր կազմակերպություններից: Նիկիտա Պավլովիչը շնորհակալություն հայտնեց, եւ նրա խոսքը շատ հուզիչ էր:

Երիտասարդականի նոր հաղթանակը

Աբովյանի քաղաքային մարզադաշտում հանդիպեցին Եվրոպայի առաջնության 5-րդ ընտրական խմբի մասնակիցներ Հայաստանի ու Լեհաստանի երիտասարդական հավաքականները:

Մեր թիմը վերելքով է հանդես գալիս վերջին խաղերում, եւ այս հանդիպումը բացառություն չեղավ: Մրցելով խմբի առաջատարներից մեկի հետ՝ մարզիչ Անդրանիկ Ադամյանի սաները կարողացան առավելության հասնել: Հայ ֆուտբոլիստները կարողանում էին ժամանակին չեզոքացնել լեհերի ստեղծած վտանգները, իսկ հարմար պահին դիմում էին սուր հակագրոհների: Խելամիտ տակտիկան տվեց իր արդյունքը: Կարեն Ալեքսանյանի (56՝) եւ Հայկ Հակոբյանի (67՝) դիպուկ հարվածները 2-0 հաշվով հաղթանակ բերեցին Հայաստանի հավաքականին:

Անցկացրած 7 խաղերից հետո մեր երիտասարդականն ունի 10 միավոր (3-ական հաղթանակ եւ պարտություն, 1 ոչ-ոքի):

Ռ. Ա.

«Քաղաքակրթությունների երկխոսություն» մրցաշարի երկրորդ մեկնարկը

Մայրաքաղաքի «Դինամո» մարզադահլիճում սկսվեց մինի ֆուտբոլի միջազգային երկրորդ մրցաշարը, որին մասնակցում են արտասահմանյան դեսպանությունների 9 թիմեր: Մրցաշարի կազմակերպիչներն են Արտասահմանյան թղթակիցների ասոցիացիան, Հայաստանում ՄԱԿ-ի ներկայացուցչությունը, Իրանի եւ ԱՄՆ-ի դեսպանությունները, ՀՀ ֆուտբոլի ֆեդերացիան:

Բացման հանդիսավոր արարողության ժամանակ ելույթ ունեցան Հայաստանի արտաքին գործերի փոխնախարար, ֆուտբոլի մեծ սիրահար, ԱԳՆ-ի թիմի անդամ Ռուբեն Շուգարյանը եւ տողերիս հեղինակը: Ֆուտբոլասերներից բացի ներկա էին նաեւ բազմաթիվ հայտնի դիվանագետներ եւ քաղաքագետներ, որոնց թվում էին Հայաստանում ՄԱԿ-ի մշտական ներկայացուցչության համակարգող Կատիցա Չեկալովիչը, Հայաստանում Իրանի դեսպան Մոհամադ Ֆարհադ Քոլեյնին, Իտալիայի դեսպան Պաոլո Անդրեա Տրաբալցան, ՀՀ նախագահին կից մարդու իրավունքների հանձնաժողովի նախագահ Պարույր Հայրիկյանը, Հայաստանում Ռուսաստանի դեսպանության հյուպատոսական բաժնի վարիչ Վլադիմիր Խուլյովը եւ շատ ուրիշներ: Հայաստանի վարչապետ Անդրանիկ Մարգարյանի՝ մրցումների մասնակիցներին հղված ուղերձում գոհունակություն էր արտահայտվում, որ այս մրցաշարը ավանդական է դարձել եւ ավելի մեծ մասսայականություն է ձեռք բերում: «Կարծում եմ, որ այսուհետեւ այն կգրավի իր մշտական տեղը մարզական եւ հասարակական կյանքում՝ դառնալով սիրված եւ սպասված միջոցառումներից մեկը, քանի որ մրցաշարը ծառայում է ոչ միայն ամենամասսայական խաղի տարածմանը, այլ նաեւ ժողովուրդների միջեւ երկխոսության հաստատմանն ու Հայաստանում հավատարմագրված տարբեր երկրների դիվանագետների միջեւ բարեկամության ամրապնդմանը»:

Այնուհետեւ խաղահրապարակում ծայր առան իսկական ֆուտբոլային մենամարտերը:

Խոշոր անակնկալ մատուցեց նախորդ տարվա մրցաշարի հաղթողը՝ Ռուսաստանի դեսպանության թիմը, որը 1-5 հաշվով պարտություն կրեց գերմանացիներից: Նույնպես անսպասելիորեն եւ նույնպես 1-5 հաշվով Հայաստանում ՄԱԿ-ի ներկայացուցչության թիմը զիջեց ամերիկացի դիվանագետներին: Ապա նախորդ խաղարկության երրորդ մրցանակակիր Արտասահմանյան թղթակիցների ասոցիացիայի թիմը, 2-0 շահելով Հայաստանի ԱԳՆ-ի թիմի հետ հանդիպման առաջին խաղակեսը, «հաջողեցրեց» երկրորդ խաղակեսում 4 գնդակ բաց թողնել եւ ի վերջո պարտվել 2-4 հաշվով: «Էքսպաս» թիմը, որը կազմված է Ավստրիայի, Հոլանդիայի, ԱՄՆ-ի, Հայաստանի քաղաքացիներից եւ Մեծ Բրիտանիայի դեսպանության երեք դիվանագետներից, ոչ մի հույս չթողեց Իտալիայի դեսպանության թիմին՝ նրան հաղթելով 6-0 հաշվով: Այդ օրը խաղից ազատ էին իրանցի դիվանագետները:

Երկրորդ տուրի խաղերը կանցկացվեն հունիսի 9-ին:

ՏԻԳՐԱՆ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ
Մրցաշարի կազմկոմիտեի նախագահ, Արտասահմանյան թղթակիցների ասոցիացիայի նախագահ

Օրվա հետքերով

ԲՐՅՈՒՍԵԼ

Եվրամիության հետ գործակցությունը՝ արտակարգ կարեւոր ...

Սկիզբը էջ 1

Բայց ՆԱՏՕ-ն տարածաշրջանից տեղեկություններ ստանում է, մասնավորապես հայ-ադրբեջանական հարաբերությունների մասին, եւ ԷՊ շուրջ բանակցությունների բարեհաջող ավարտը տեսնում են ԵԱՀԿ Մինսկի խմբի շրջանակներում: Տեղեկացնենք, որ վաղը սպասվում է Եվրալանջյան միության արտգործնախարարների նիստը, որին կմասնակցի նաեւ ՀՀ նախագահին ուղեկցող ՀՀ պաշտպանության նախարար Սերժ Սարգսյանը:

Ճեպազրույցում ՀՀ նախագահին հարց ուղղվեց, ինչպես ասում են՝ «պրոտոկոլից դուրս», թե ի՞նչ է մտածում Ռուսաստան-Բելառուս միությանը ՀՀ անդամակցության մասին: ՀՀ նախագահը կտրուկ պատասխանեց, որ ՀՀ արտաքին քաղաքականության օրակարգում նման հարց չկա: Հայաստանը Ռուսաստանի եւ Բելառուսի հետ համագործակցում է ԱՊՀ, ինչպես նաեւ ԱՊՀ Հավաքական անվտանգության պայմանագրի շրջանակներում: Քանի որ Հավաքական անվտանգության պայմանագրի երկրների նախագահների հանդիպումը տեղի ունեցավ մայիսի վերջին Երեւանում, ինքը, որպես նախագահող երկրի նախագահ Ջ. Ռոբերտսոնին է փոխանցել այդ մասին տեղեկատվություն:

«Ի՞նչ խորհուրդ կարող եք տալ Ձեր կոլեգա, Բելառուսի նախագահ Լուկաշենկոյին, որ իր երբեւ նախագահի կենսագրության մեջ գոնե մեկ անգամ եվրոպայում արժանանա նման բարձր պատվի եւ ընդունելության, ինչպես Պուտ եք արժանանում», բելառուսցի լրագրողի հարցին ի պատասխան Ռ. Քոչարյանը նշեց. «Եվրամիության հետ համագործակցությունը մեր արտաքին քաղաքականության արտակարգ կարեւոր առաջնահերթությունն է: Մենք փորձում ենք Հայաստանի հատարակական կյանքը կառուցել եվրոպական արժեքների վրա»: Ըստ էության մեկ անգամ եւս ՀՀ նախագահը կրկնեց այցի ընթացքում ԵՄ տարբեր ղեկավարների հետ հանդիպումներում հնչեցրած խոսքը, բայց այս անգամ՝ ՆԱՏՕ-ի կտուրի տակ:

ԱՆԿԱՐԱ

Թուրքական պայմաններ Հայաստանի հետ դիվ. հարաբերություններ հիմնելու համար

ԵՐԵՎԱՆ, 6 ՀՈՒՆԻՍ, ԱՐՄԵՆՊՐԵՍ: Թուրքիայի վարչապետ Բ. Էջեւիթը ԱՄՆ-ի պաշտպանության նախարար Դոնալդ Ռամսֆիլդին հայտնել է Երեւանի հետ դիվանագիտական հարաբերություններ հիմնելու նախապայմանները:

Ինչպես գրում է թուրքական «Յուրրիեթ» թերթը, երեկ հանդիպում ունենալով Թուրքիայում գտնվող ԱՄՆ-ի պաշտպանության նախարարի հետ, վարչապետ Էջեւիթը ներկայացրել է այն երկու նախապայմանները, որոնց իրականացման դեպքում Թուրքիան պատրաստ կլինի դիվանագիտական հարաբերություններ հաստատել Հայաստանի հետ. նախ՝ Հայաստանի կողմից, առանց որեւէ նախապայմանի, զորքերի դուրս բերում Լեռնային Ղարաբաղից եւ երկրորդ՝ Հայաստանի կողմից Ադրբեջանի ու Նախիջեւանի միջեւ անվտանգ միջանցքի տրամադրում:

Հայտնելով, որ Թուրքիայի եւ Հայաստանի միջեւ դիվանագիտական հարաբերությունների հաստատումից ավելի շատ Հայաստանն է շահելու, Էջեւիթը հայտարարել է. «Ի սկզբանե մեր բոլոր պայմանները Հայաստանի օգտին են եղել: Այսօր Հայաստանը փակված տուփ է հիշեցնում՝ տնտեսապես խայխայված, իսկ բնակչությունը աղքատության սահմանագծին հասցված: Եթե Երեւանում ընդունեն մեր պայմանները, ելք կունենան դեպի Սեւ ծով, տնտեսական շարժ կսկսվի, հնարավոր կլինի ժողովրդի համար բարվոք պայմաններ ստեղծել: Բացի դրանից մեր տարածաշրջանում դրանով կայունություն կհաստատվի: Այս բոլորն ի՞նչ կերպ կարող է վնասել հայ ժողովրդին»:

ՀԱՄԱՌՈՏ

Իրանահայերը կոչ են անում քվեարկել Խաթամիի օգտին

ԹԵՀՐԱՆ, 6 ՀՈՒՆԻՍ, ՆՈՅՅԱՆ ՏԱՊԱՆ: Հունիսի 5-ին իրանահայերը մի հայտարարություն են տարածել, որով կոչ են անում հունիսի 8-ին կայանալիք նախագահական ընտրություններում քվեարկել Իրանի գործող նախագահ Խաթամիի օգտին: Իրանահայերը, որոնց թիվը, ըստ ԻՐՆԱ-ի, 250 հազար է, այդ հայտարարությունում թվարկում են անցած 4 տարիների ընթացքում Խաթամիի ունեցած հաջողությունները: «Նա մեզ ճանաչեց մշակութային ու մարդկային մակարդակներում: Խաթամին մեզ հույս տվեց», ասված է հայտարարության մեջ:

Կիեւում սպանվել է ադրբեջանցի հայտնի գործարար Էլչին Ալիեւը

ԲԱԿՈՒ, 6 ՀՈՒՆԻՍ, ԱՐՄԵՆՊՐԵՍ: Կիեւում սպանվել է ադրբեջանցի հայտնի գործարար Էլչին Ալիեւը: Ըստ «ենի Մուսավաթ» թերթի հաղորդման, այդ առնչությամբ Ուկրաինայի իրավապահ մարմինների տեսադաշտում հայտնված անձանց թվում է ոմն Մազահիր, որը ժամանակին ծառայել է Էլչիբեյի կառավարությունում՝ ներքին գործերի նախարար Իսմանդեր Համիդովի պահակախմբում: Թերթի վարկածի համաձայն, սպանության մեջ կասկածվում է ադրբեջանական բանակի բարձրաստիճան մի սպա, որի անունը չի նշվում:

Ի լուր լրագրողների

Մամուլի ազգային ակումբը «Հրատապ թեմա» ծրագրի շրջանակներում լրագրողներին հրավիրում է հանդիպման ՀՅԴ բյուրոյի ներկայացուցիչ Հրանտ Մարգարյանի հետ:

Հանդիպումը կկայանա ուրբաթ՝ հունիսի 8-ին, ժամը 10:30-ին՝ Մամուլի ազգային ակումբում (Մամուլի տուն, 10-րդ հարկ):

ՄԱՄՈՒԼԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԿՈՒՄԲ

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

Լուծարվում է «Սեսի-Տիգ գրուպ» ՍՊԸ-ն: ՀՀ պետռեգիստրում գրանցված է 07.02.96 թ., գրանցման համարը 273.110.01306, վկայական՝ 01Ա N022858:

Պարտատերերի պահանջները ներկայացվում են Է. Երեւան, Շարենցի 10 հասցեով, երկու ամսվա ընթացքում: Լուծարման մասին հրապարակման պահից:

ԼՈՒԾԱՐԱՐ ՎԻՇԱՊԱՏՈՒՀԻ

«Գուգարի գեղ» ՊՕԲԸ 2001 թ. հունիսի 12 աճուրդային կարգով վաճառվում են՝
1. Ավտոմոբիլաբեռնատար Կրազ-256Բ, 1987 թ. արտ.
2. Ավտոմոբիլաբեռնատար Մազ-5551, 1989 թ. արտ.
Դասցեն՝ Լոռու մարզ, Մարգահովիտ, հեռ. 50358:

For Your Internal News of Armenia
Log on to [illegible]
In English, Russian, Armenian and Turkish

ՀԱՄԵՐԳ

Հունիսի 8-ին, ժ. 19:00-ին «Արամ Խաչատրյան» համերգասրահում կկայանա Հայաստանի Ֆիլհարմոնիկ նվագախմբի համերգը՝ դիրիժոր Հովսեփ Շեքիլյանի (Սիրիա) ղեկավարությամբ:

Ծրագրում՝

Վ. Այվազյան
«Գուսան Հավասի երգերը»
Վ. Ա. Մոցարտ
Կոնցերտային սիմֆոնիա ջութակի, ալտի ու նվագախմբի համար
Մենակատարներ՝ Գագիկ Սմբատյան, ջութակ
Ալեխանդր Կոսեմյան, ալտ
Ա. Բրուքներ
Սիմֆոնիա թիվ 4 («Ռոմանտիկական»)

Գեղարվեստական ղեկավար եւ գլխավոր դիրիժոր Էդուարդ Թոփչյան
ՀՊՆ-ի 2000/2001 թթ. համերգաշրջանի հովանավոր՝
AGBU-Հայկական բարեգործական ընդհանուր միություն

Լրացուցիչ տեղեկությունների համար խնդրում ենք զանգահարել 560645 հեռախոսահամարով:

ՀՊՆ-Ի ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ

ARMENTEL

Ի գիտություն Արմենտելի բաժանորդների

ՀեռանարկությանՀ կողմից իրականացվող տեխնիկական վերազինման եւ ԱՀԿ-ների թվայնացման հետ կապված անհնարին են դարձել անալոգային կայանների բաժանորդների հեռախոսահամարներից դեպի միջքաղաքային, միջազգային եւ բջջային կապ կողերի սահմանափակումները:

Հետեւաբար ս. թ. հունիս ամսից բաժանորդներից նման սահմանափակումների դիմումներ Արմենտելի կողմից չեն ընդունվելու, ուստի այն բաժանորդներին, որոնք նախկինում դիմել էին կողի սահմանափակման, առաջարկվում է վերահսկելու իրենց խոսակցությունների տրաֆիկը:

Միաժամանակ թվային ԱՀԿ-ների բաժանորդներին հիշեցվում է, որ կարող են ինքնուրույն սահմանափակել իրենց հեռախոսահամարների ելքերը, որի կարգը տրամադրվում է սպասարկման տեղամասի կողմից:

ԱՐՄԵՆՏԵԼ ՀՁ ՀԱՍԱՐԱԿԱՅՆՈՒԹՅԱՆ ՀԵՏ ԿԱՊԵՐԻ ՎԱՐՉՈՒԹՅՈՒՆ

Կովկասի տարածաշրջանային բնապահպանական կենտրոն/ՏԲԿ/ Կովկաս

2001 թ. դրամաշնորհների ծրագիր հասարակական կազմակերպությունների (ՀԿ) համար

- Մշակական գործող դրամաշնորհներ
- Փոքր դրամաշնորհներ
- Հատուկ դրամաշնորհներ
- Անդրսահմանային դրամաշնորհներ

Դրամաշնորհների ծրագիրը նախատեսված է եւ ուղղված Կովկասի (Հայաստան, Ադրբեջան, Վրաստան) այն ՀԿ-ներին, որոնց ծրագրերը նվիրված են շրջակա միջավայրի պահպանման խնդիրների լուծմանը:
Հայտերի ընդունման ժամկետներն են՝
Մշակական գործող դրամաշնորհների համար ժամանակային սահմանափակումներ չկան, իսկ փոքր, հատուկ եւ անդրսահմանային դրամաշնորհների համար մինչեւ 31 հուլիսի, 2001 թ.
Մանրամասն տեղեկություններ կարող եք ստանալ հետեւյալ աղբյուրներից՝

- Կովկասի ՏԲԿ գրասենյակ-Վրաստան, 380062 Թիֆլիս, Ճավճավաձեի 74, սենյակ 804
  Հեռ. (+995 32) 25-36-49/48, էլ. փոստ, rec@caucasus.net
- Կովկասի ՏԲԿ լրագրի երկրորդ բողարկումում, որը կարող եք պատվիրել՝ գրելով. infocom.rec@caucasus.net
- Կովկասի ՏԲԿ ինտերնետի էջում-http://rec.caucasus.net

MIGMA computer center

«ՄԻԳՄԱ» համակարգչային կենտրոն

Հատուկ առաջարկ

PIII 733, 64Mb RAM, 20Gb HDD, CD-ROM, SVGA 8Mb, Sound, Keyboard, Mouse, Pad, AOC Monitor15"

+ անվճար 56.6K ֆաքս-մոդեմ եւ 5 ժամ անվճար ինտերնետ

ՀՀ, Երեւան, 375001, Սայաթ-Նովա 15.
Հեռ. (374 1)565917, 564849 Ֆաքս. (374 1) 52 13 56
e-mail: migma@migma.am
URL: http://www.migma.am

Հայաստանի ամերիկյան համալսարանը

Մրցութային կարգով աշխատանքի է հրավիրում՝

■ Ընդունելության հարցերի կոորդինատորի

Թեկնածուն պետք է ունենա բարձրագույն կրթություն եւ առնվազն երկու տարվա համապատասխան աշխատանքային փորձ: Հայերենի, անգլերենի եւ ռուսերենի եւ համակարգչի գերազանց տիրապետումն ու կազմակերպչական եւ հաղորդակցման ունակությունները պարտադիր են:

Պահանջվող փաստաթղթերն են՝ կրթության վկայական, ինքնակենսագրություն (անգլերենով/resume) եւ երկու մասնագիտական երաշխավորագիր:

■ Գրասենյակի կոորդինատորի

Թեկնածուն պետք է ունենա բարձրագույն կրթություն, լավ տիրապետի հայերեն, անգլերեն եւ ռուսերեն լեզուներին եւ համակարգչային հմտություններին, ինչպես նաեւ ունենա առնվազն մեկ տարվա համապատասխան աշխատանքային փորձ:

Պահանջվող փաստաթղթերն են՝ կրթության վկայական եւ ինքնակենսագրություն (անգլերենով/resume):

Փաստաթղթերն ընդունվում են մինչեւ ս. թ. հունիսի 13-ը, ժ. 17:45:

Բոլոր դիմորդներից կպահանջվի մասնակցել անգլերեն լեզվի քննության:

Դիմել ՀԱՀ, 50 սենյակ, հետեւյալ հասցեով՝ Մարշալ Բաղրամյան 40:

Հայաստանի ամերիկյան համալսարան-2001
Նվաճումների տասնամյակ

Հրավիրում ենք Ձեզ Լիլիթ Պիտոյանի համերգին

Համերգը կկայանա ուրբաթ. հունիսի 8-ին. ժամը 18:00-ին. Հայաստանի ամերիկյան համալսարանի մեծ դահլիճում: Մուտքն ազատ է:

ՎԱՃԱՌՎՈՒՄ Է
Panasonic EB-BS 450 մոդելի բջջային հեռախոս:
Հեռ. (09)429353

@rmineo Global Telecommunications
Ինտերնետ ծառայություններ «ԻՆՏԵՐՆԵՏ» սրճարանում: Խանջյան 50: Հեռ. 575823:

«Գինդ» տպագրատուն, Երեւան, Բագրատունյաց 70ա Գրանցման թիվ 65. Դասիլ 69150. Տպաքանակը՝ 3000 Ստորագրված է տպագրության՝ 6. 05. 2001 Գինը՝ 100 դրամ